

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ


ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.	2ի և 2իադոճ	Մ. ԻԱԶԸՃԻԱՆ
ԱՌՈՂՋԱՐԱՆԱԿԱՆ.	Գաղղիաւան ախտ և Ամուսնութիւն.....	ՏՐ. Ռ. ՌՕՊԵՆՍՈՆ
ԱՐՇԵՍԱԿԱՆ.	Փարիզէն ի Լոնտրա մէջ ժամու մէջ.....	ՀԱՍԿԱՔԵՂ
ՏԵՂԱԳՐԱԿԱՆ.	Այն	Մ. ՆԱԹԱՆԵԱՆ
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ.	Ֆինլանտացի նորգ (Ա. ԳՈՐԵԼԻ) Թարգ.....	ԱՐՍՈՒԿԵՍ
ՆՈՐԱՎԷՊ.	Մայրն (ԿիւիՅ ՏԸ ՄՈՐԱՍՄԱՆ).....	
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ.	Հերաթ.....	
ՔԱՂՈՒՄՇ ՇԱԲ. ԼՐՈՅ	Արտաքին, Ներքին, Ազգային.....	
ՍԻՄՈՆԷ ԵՒ ՄԱՐԻ	(Կղազիէ ալ Մօթէքէն) Թարգմ.....	Մ. ՉՈՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ.....	տարեկան.....	Կէս ոսկի Օսման.
»	վեցամսեայ.....	Քառ » »
Գաւառներ.....	տարեկան.....	Կէս » »
Օտար քաղաքներ.....	»	12 Ֆրանք
Թղթատարութեան ծախք »	»	15 Ղաֆ. արծաթ
Մէկ թերթին Կիւնէն.....	»	60 փարայ

Մասիսի խմբագրութեան վերաբերեալ ո՛րեւէ գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս Լրագրաց
Ղալաթիա, Նորաստիկեան խմբ.



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐԱԾ

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա . 5 Ապրիլ

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՎԹՈՑ

Օսմանեան Բօնսօլիտէ

Գահեկան

Երէկ երեկոյ գոց . (Միաց. D. Սէրի	47 40
Պօրային գոցուելէն վերջը	47 22
Բերայի մէջ	—
Առաւօտուն բացուեցաւ	47 45 1/2
Բարձրագոյն գին	47 45 1/2
Նուազագոյն »	47 43
Կէս օրին	47 43 1/2
Փոխառութիւն 1858) A. Սէրի Գ. Ե. Ա. Ո. 29 20	
» 4862)	
» 4860)	
» 4863) B. » » » » 48 40	
» 4872)	
» 4865)	
» 4869) C. » » » » 47 43	
» 4873)	

Իւնիֆիէ եզիպտական

Երէկ իրիկուն գոցուեցաւ	70 43
Այս առտուն բացուեցաւ Գ. Ե. »	69 25
Կէս օրին	69 25

ԲՈՒՆԵՏՈՒՄՔ

Սօրիէթէ Ժէնէրալ..... Գ. Կ. Անգլ. Լ. Բ.	3 40
Քսէտի Ժէնէրալ..... » » Օսմն. »	6 30
Պանք տը Գ. Ե. » » » »	5 42
Սօս. Շանօ է վայէօր..... » » » »	3 30
Թրամուէյ..... » » » »	265
Բուժէյի երկաթուղի Ֆր.	42 25
Օպլիկտսիօն տը Բրիտիթէ »	—
Բաժնեթուղթ Լաւրիօմի »	65

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

3 ամիս Լոնտրայի վրայ պանքայի)	111
3 » » » (վճռկնին)	110 3/8
3 » Բարիլի » (պանքայի)	22 85
» » » » (վճռկնին)	22 97 1/2

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	դր. ... 400
20 Ֆրանքոնց	» ... 87 30
Անգլիական ոսկի	» ... 410 22
Բօլ Իմբէրիալ	» ... 90 42
Քրիմից	» ... 54 45
Ռուսկի թղթադրամ	» ... 9 42
» արծաթ	» ... 89 20
Ֆիօրին	» ... 9 2
Մէճ. արծ. (տարբ.)	» ... 107 20
Վէջնոց	» ... 102 20
Հինգնոց	» ... 102 30

Մէթալիք	» ... 98 20
Պղինձ	» ... —
Թղթադրամ	» ... —

ԵՐՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն , 16 Ապրիլ, ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քօնսօյիտէ գոցուեցաւ (բարձրացում) 95 3/8	
Օսմն. » Սէրի S. բացուեցաւ 45 3/4	
» » » գոցուեցաւ 46	
» » » Ա. 28 1/2	
» » » Բ. 48	
» » » Գ. 46	
Փոխառութիւն 1877	72 1/4
Պանք Օթօման	44 3/4
Ռուսական փոխառ. 73 (գ. 4.)	85 1/8
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ)	61 3/8
» առանձն. (բրիվիէթիէ)	79 1/2
Տայրա Սանիէ	56 1/2
Տօմանիալ (փոխառ. Բօչիլա)	79 1/2
Հունգարական պարտաթուղթ 1877.....	—
Փոխանականութիւն Բարիլի վրայ	—

Վիէննա , 15 Ապրիլ, ժամ 4 երեկոյ

Փոխանականութիւն Լոնտոնի վրայ	126 30
Օսմանեան երկաթուղի	20 20

Բարիլ, 15 Ապրիլ, ժամ 3 վայր. 45 երեկոյ

Իրանական Ռանթ 4 1/2 0/0.....բաց	108 05
» » 3 0/0.....բաց	77 65
Օսմանեան քօնսօյիտէ բացուեցաւ	45 57 1/2
» » գոցու. գ. 4.	45 87 1/2
Միացեալ պարտք Սէրի Բ.	48
» » Գ.	45 80
» » Գ.	—
Օսմանեան երկաթուղի	41 50
» Իէթիի բաժնեթուղթ.....	543 75
Պանք Օթօման	—
Գրէտի Լիօնէ	525
» Ֆոնսիէ գ. 4.	1318 75
Բաժնետոմս Լիօնի (գուր. կտր.)	1265
Ռուէզի ջրանցք	1980
Ռուսական 5 0/0 1877ի (գ. 4.)	83
Իտալական Ռանթ (գ. 4.)	93 05
Եգիպտական միացեալ գոց	314 25
Սպանիական (արտաքին) (գ. 4.)	57
Բրիտիթէ Թիւրք	365
5 0/0 Հելլենական (գ. 4.)	340
2 էք Լոնտրայի վրայ	25 38

ԲԱՐԻՋ ԲԹԻԹ ՊՈՐՍԱ

Ապրիլ 15, ժ. 10, վ. 45

Ֆրանս. Ռանթ , 4 1/2 0/0.....	108 45
Օսմանեան »	45 95
Եգիպտական միացեալ	314 25

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34րդ ՏԱՐԻ

1885 ԱՊՐԻԼ 6

ԹԻԻ 3764

ԿՈՂՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 6 ԱՊՐԻԼ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՁԻ ԵՒ ՁԻԱԶՈՆ

Ձի բառին անմիջական բաղդատականը արիական ազդակցութեան մէջ գտած չեմ, բայց եթէ հեռաւոր կերպով Հնդկաց հայաբառին մէջ, որ արական ըլլալով կը նշանակէ ձի. իսկ անոր իզականը կ'ըլլայ հայ՝, եւ կը բաղդատուի մեր ճայիկ բառին հետ, որ կը նշանակէ էգ ձի, մատակ ձի :

Ձի հասարակ բառը մեր գրականութեան մէջ ուրիշ ձեւերով ալ գրուած կայ : — Դիւի հին քերականութեանց մէջ փաղանունը քսուած է ձիու հետ : Թերեւս դիւի է ձի բառին նախնական հնչումը : Իսկ այդ երկու ձայները ինչ պարագայով կը տարբերին իրենց նշանակութեան մէջ յայտնի չէ : — Մովսէս Կաղկանտուացոյ պատմութեան (Ա. գիրք, ԺԲ. դէ) գրչագիր օրինակներէ մին ձի բառը կը հնչէ թի. ուր կ'ըսէ, «Չգըլուխ թաւաւորական թիացն կազմեալ թագիւ» : Իսկ Բ. գիրք Խ. գլխոյն մէջ նոյնը Դ տառիւ գրած է. ուր «Ասպանդիադայ ումեմն վայրագ սկայի ձիով այրեցելով զո՛ մատուցանէք» խօսքը՝ ուրիշ դարձուածքով կը բացատրէ ու կ'ըսէ, «Թմբուկը եւ չուինջը ի վերայ դիականացն (ձիականացն, ձիոցն), եւ նրանակոտոր եւ» : Ուրիշ անգամ դարձեալ Դի ձայնը փոխուած է ի Դիի. զի Խորենացոյ Հռիփսիմեանց պատմութեանց մէջ (տիպ Ս. Ղազար էջ 300) «Հասեալ անդառաքեալման քահանայիցն զընդդիմամարտըն արգելուին զձիոցն», գրչագիր օրինակ

մի կ'ըսէ «զդիւածօնիցն մարտ» (այսինքն դիւածօնիցն, ձիւածօնիցն). այս դեւ բառը դիւային չար ոգիներու հետ բան չ'ունի, հապա է այլակերպեալն Դի (ձի) ձայնի. Այսպէս ուրեմն, սխալ զոխալ կը հրաւիրէ՝ երբ բառի մը ստույգ նշանակութիւնը անգիտութեան մէջ մնայ :

Այսքան զանազան դրչութեանց մէջէն մենք պատմական հետեւեանք մի կ'ուզեմք հանել. զի Ձիախորով եւ Դիւածօն (ձիւածօն) բառերը պատմական ակնարկութիւններ կը պարունակեն. ձիախորով կը նշանակէ ձի արեւելք ողջակէզ ընել, դիւածօն ալ դարձեալ ձի նուիրել՝ զոհել ու պատարագ մատուցանել ըստ անո՛ր որ արջառ խոյ նոխազ ողջակէզ ընել կը հասկանամք :

Հայոց դաւառներու մէջ ձիազոհի պաշտամունքն հաստատուած լինելը մեք ազգային պատմութենէն չ'զիտէինք, բայց եթէ Հռիփսիմեան կուսանաց պատմութիւնը որ Խորենացոյ անունը կը կրէ, զմեզ տեղեկացունէ այժմ որ ձիազոհի պաշտամունքն Հայաստանի մէջ հաստատուած կայր :

Պատմութեան ակնարկութիւնը սապէս է : Դիոկղետիանոսի Հռովմայ կայսեր ժամանակ Հռիփսիմեան կուսանք թուով եօթանասուն իրենց կուսութեան մարքութիւնը անեղծ պահելու համար, կայսեր տուած անհանգըստութեան պատճառաւ ծածկաբար մեկնեցան Խաղիայէն ընկերակցութեամբ քահանայից. եւ չ'զիտցուիր ո՛ր ճանապարհաւ, հասան մինչեւ Հայաստանի բարձրագոյն դաւառները՝ յուսալով պատապարել հոն իրենց կուսութեան ուխտը : Այդ կողմանք իրենց համար բոլորովին անձանօթ էին, եւ հեթանոսութեան մէջ ընկղմած աշխարհ. անոր համար չ'զիտցուիր թէ ի՛նչ համոզ-

մասն միւսը, եւ կամ ինչ հրապոյր ունեցաւ այն երկիրը մինչեւ հոն գտնոնք ձգելու : Ապրիլի է կորուսիչ բազէի հալածմունքէ չփութած աղաւնեաց երասի նման՝ առանց երկայն մտածելու եւ յառաջօրհանուրդ ուրջնանքներ ունեցող, մոռացութեան երկրի մը մէջ ապաւնէն գտնելու համար չափան ու անկան Հայոց ժայռերուն վրայ : Հոն շուտով համոզուեցան որ այդ երկիրը Խոսիւր չէր, եւ միտքն էին ալ անկարծի էր, անոր համար խոսիւր խոսիւր ցրուեցան այս կամ այն կողման լեռներուն մէջ՝ առանց դեռ հաստատուն բնակութեան տեղ ունեցող : Այդ խոսիւրներն միոյն համար է որ կըսէ իրենց վաշտը պատմիչը, թէ « Ռմանք ի նոցանէ եկին ի Բիզնունեաց դաւառ՝ ի քաղաքն Սլաթ երկիրսն առնել . եւ տնտիս փոխին ի գաւառն Մոկաց ի կճաւն կոչեցեալ տեղի՝ դիւաց (քրմաց) լցեալ պաշտամամբ : Հասեալ անդ առաքելանման քահանայիցն եւ արքոց կուսանացն զընդլիմամարտն արդեւուին զձիոցն, (օրինակ մի ըզդիւաձօնիցն մարտ արդեւուին) . յորում զայրազնեալ դիւացն (քրմաց) դիմեալ ի վերայ, խեղէին, ծռէին, պնջատէին զպաշտօնեայս իւրեանց : Եւ անդ առաքելանման քահանայիցն հալածեալ զնոսա, եւ քանդեալ ըզպաշտամունն նոցա, բժշկէին զխեղեալն» (Մովս. Խոր. Ռատենագր. էջ 400) : Այս յիշատակութենէս յայտնի կը տեսնուի որ Մոկաց դաւառին մէջ կճաւն կոչուած տեղը, ուր շատ քուրմեր կային իրենց պաշտամունքով, եւ ուր ձիազոհի աշխարհահանդէսը կը կատարուէր, կարեւոր տեղ մը ըլլալու է Հայոց կրօնքին . կ'երեւի թէ կուսանաց հոն հասնելու ժամանակը հանդիպեցաւ նաւասարդի օրերուն (մարտի 9) եւ կամ ամառուան արեւադարձի օրերուն, զի այն էր ժամանակ ձիազոհի : Շատ հին ժամանակ Սրիք մէկ ձի միայն կը զոհէին, եւ այն ալ քիչ անգամ . բայց յետ ժամանակաց զոհելի ձիոց թիւը աւելցաւ . Աւեստայի մէջ զիւցալանց զոհած թիւը հարիւր ձի է . աւելի ետքերը հազարաւոր ձիեր միւլեղնաբար կը վարէին ի սպանդ . եւ ի կրակ . հոն կրակի եւ արիւնի երկիւղէ յիմարած ու աչքերնին դարձած կենդանիքն պէտք կ'ըլլար բռնութեամբ ու խժական խստութեամբ վարել ի զոհ . այս բանս կ'ակնարկէ զընդդիմա-

մարտն արդեւուին զձիոցն խօսքը . եւ յիշողեցան ալ արդեւուլ այդ դործին սպասաւորները : Բայց քուրմերը զայրանալով թէ ինչո՞ւ պաշտօնեայքն անդործ եղան եւ մեհենահան մեծ դործին կատարումն ընդհատեցաւ, վաղեցին պաշտօնէից վրայ, մէկը զարկին, իւրսը ծեծելով խեղեցին, ուրիշներու քիթը կտրեցին : Իսկ քահանաները զքուրմերն հալածելով, անոնց պաշտամունքն աւերեցին, եւ խեղեալ պաշտօնեաներն բժշկեցին : — Յանուն Խորենացոյ տպուած այս մանրամասն պարագաները աւելի Յայամաւորքի եւ յետին դարուց գրչութեան ոճն ու կերպարանքն ունի . մանաւանդ որ անհաւատալի՝ ալ կ'երեւին ինչ ինչ պարագայք, զի ձիազոհը շատ հոգաւոր պաշտամունք ըլլալով եւ աշխարհահանդէս եւ ուր քրմութիւնը զօրաւոր, ինչպէս կարողացան մէկ քանի քահանայք ու կուսանք քուրմերը ցրուել եւ պաշտամունքն աւերել, մանաւանդ այնպիսի տեղոյ մը վրայ ուր քրմութիւնը ամրապէս հաստատուած էր . «դիւաց (քրմաց) լցեալ պաշտամամբ» : Այսպիսի պատմութիւններէ համ առնելու համար մարդ միջին դարու ոգւով զգածեալ ըլլալու է : Մենք այժմ առանց այդ մանրամասնութեանց միտ դնելու մեր բանից կարգին համար սա հարկաւոր գիտելիքն ունինք որ Տրդատայ ժամանակ Հայոց գաւառներու մէջ ձիու զոհ կը կատարուէր . իսկ անկէ ետքը անոր յաջորդութեանց ժամանակ մեր աշխարհին մերձաւոր Առկասու լեռներուն վրայ Հոնաց ազգին մէջ ձիազոհի պաշտամունքն կատարուիլը ապացուցուած է Ապղիանտայոյ սա խօսքով . «Ասպանդիւրադայ ումնն վայրագ սիրայի ձիովք այրեցելովք զոհ մատուցանէք» . եւ դարձեալ «Սկայի ուրումն վայրագի ձիախորով զոհիւք պաշտօն մատուցանէին» :

Հնազոյն ժամանակներու մէջ մինչ դեռ քահանայական կարգ հաստատուած չէր Արեաց ազգին մէջ, ամեն տունի տէրն էր որ Աստուծոյ նուէրներ կը մատուցանէր՝ կաթ, իւղ, բրինձ . բայց երբ քահանայական կարգը հրատարակեցաւ, նուիրելու դործն ալ անցաւ քահանայից խումբի մը ձեռքը, որ հրապարակաւ եւ հանգիստաւոր եղանակաւ կատարել սկսան : Մինչեւ այն ատեն հին Արիք միւս չէին ուտեր, եւ ոչ շնչաւոր կեն-

դանի կը սպանէին : Ձին ամենազուտական անասունն եղաւ զոհագործութեան դուռը բացող Արեայ ազգին մէջ, որմէ ետքը այժ ոչխար եղջերու արագաղ նուիրելը հետ զհետէ մուծաւ կրօնական կարգաց մէջ : Դիտելու բանը սա է որ նուիրելու կենդանիք պէտք էին արու լինել :

Ձի զոհելը Արեայ ազգին հնադոյն կարգերէն մին է, զոր իրենց լեզուով կը կոչեն *açwamedha* ձիաձօն ձիազոհ, իբր թէ մենք ալ ըսած ըլլայինք Ասպանատալ : Կը կարծուի թէ Արիք Սիւլեթական ազգերէ առած են այս սովորութիւնը : Մեր ազգին համար ալ հնադայն ժամանակներէ վիայութիւն չ'ունինք. ինչ որ Հոյսիսմանց պատմութեան մէջ երգուընցնելով գտանք, այն Արշակունեաց վերջին ժամանակներուն կը պատկանի՝ Պարթեւաց ձեռօք կամ Կովկասու Սիւլեթական ցեղից միջնորդութեամբ մտած ըլլայ Արարատայ երկրէն վրայ : Այն որ մեր ազգին հեթանոսութեան ժամանակ կրօնական սովորութիւն մը դարձած է, արժան է հոս սակաւ մի ծանօթութիւն տալ այդ արարողութեան :

Ձոհելի ընտիր եւ արու ձին, որ ոսկեղէն ծածկոյթով չքեղապէս զարդարուած պէտք էր ըլլար, կը տանէին ի զենուէ Ակնեայ կրակին մօտ : Ձիուն առջեւէն կը քաշէր նոխաղ (արու այծ) . այս երկուքը երեք անգամ սրբազան կրակին շուրջը պտըտցու-

նելէն ետքը նախ նոխաղը կը զենուին ձիուն աչքին առջեւ : Յետոյ մի յաջողաձեւն քահանայ կը զոհէր ձին՝ օգնելով ուրիշ պաշտօնէից եւ մասն մասն կը կտրէր զայն : Ոչ կրակի վրայ դնելով մասունքը, հապա կրակի դէմը դնելով զանոնք կը խորովէր, եւ կը բաշխէր անոնց որ հանդիսական էին : Արտը լեզուն եւ կուրծքն էր որ Ակնեայ կրակին կը նուիրուէր : Բուն զոհ ընել տըւողը՝ իշխան կամ թագաւոր՝ երեք յիշուած մասունքն, այսինքն սիրտը լեզուն եւ կուրծքը առնելով բրինձով ու իւզով զանգուած տալարակ ու պնակած եւ հացի վրայ, զոր բէր (բէր) կ'անուանեն, կը ձգէր Ակնեայ մեծ կրակարանին մէջ՝ մաղթելով որ Ակնին ճաշակէ զայն : Այս էր ահա նուիրելու եղանակը վէտայեան դարերու մէջ : — Իսկ ըստ օրինաց Աւետայի գլուխն ալ աջէն ու լեզուն էր, զորս հին դիւցազունք կը նուիրէին :

Հետաքրքրական է Ռիկվետայի մի երգը ձիազոհի վրայ, որոյ մէջ կը տեսնուին արարողական մանրամասնութիւնք եւ հին մարդկան անկեղծ պարզութիւնք : Նթէ Հայաստանեայց մէջ մտած էր ձիազոհի սովորութիւնը, ինչպէս ապացուցեալ կ'երեւի այժմ, չէ ընդդէմ որ ծանօթ էր նոցա նաեւ Ռիկվետայի երգը, զոր տեղեկութեան համար թարգմանաբար այս տեղ կարգեցի :

Մի՛ մէնջ Միհրա Վարուն՝ Արեա՛ման Այու Ինտրա եւ արժայինքն Մարուղք խնդրեսցեն

Մինչդեռ ի ժամ՝ նուիրի տէվաճետին երիվարի ոգեմք չարութիւն :

Յորժամ՝ զլենդին կալանաւոր զգեղապատշաճն եւ զսկեսար յանդ խման ածցեն,

Հարցեն զառաջեալ խոյտարդէտ այծ . այդ Ինտրայի եւ Բուշանայ հաճոյական է նուէր :

Ձայդ ճակ⁽¹⁾ տարցեն յառաջոյ երիվարին թեթեւոյ, զբաժին Բուշանայ եւ դից համայնից,

Նոյն՝ եւ Իվաչդրայ դոցի հաճոյ՝ մինչ ընդէ ձիոյ հանցի նուէր :

Յորժամ՝ որդիք Մանաւայ գերիվարն երցս՝ բազնաւ ածցեն շուրջ,

Անդ յառաջէ պատարագին հեղինակ՝ Բուշանայ նախընծայելին այծ :

Քահանայն մատուցող յաջողն ի զենուէն բաժակ ի ձեռին երգ ի բերան մատչի առ Ակնին վառեալ,

(1) Ճակ բառը երկու կերպ խմացած են մեր նախնեաց հին բերականք . մի՛ իգական անասնոց կարգին մէջ զնելով ասեր են «Ձիոյ իգականքն են մատեան, զամբիկ՝ ճայիկ՝ զոր ճակ անուա՛ն են» : Իսկ երկրորդ՝ արու անասնոց կարգին մէջ զնելով ասեր են «Սգն, խոյ, ճակ» : Այս երկու կարեւոր պարագայքն բառաղիրք չ'զանազանելով, պիտանի բառ մը մեր լեզուէն դուրս ընկած է : Ինչպէս եզն կովու արուն է, եւ խոյ ոչխարի արուն, այսպէս եւ ճակ այծի արուն է : Մեր լեզուի բառերով չէինք կրնար գտնել թէ ճակը արու այծ նշանակէ, զի նախնիք այդ բառին յիշատակութիւնը մայն ըրած են առանց աւելի բացատրութիւն տալու : Գիտեմք այժմ որ ճակը (արու այծը) հաւատար է հնդկաց Զախ բառին, որ կը նշակէ արու այծ, նոխաղ : — Հաճութիւն կ'իմանամ այժմ բառապրոց կարգին մէջ ճակ բառին նշանակութիւնը որոշելու :

Յաշտեաւս հրաշակերտաւ եւ ըղծիւք ձօնիս գիտասցուք լինել հաճոյք։
 Որք հատանէքդ ղյոպնակ⁽²⁾, որք բերէք ղյոպնակ, որք զանուր ձիոյ խառնէք ընդ յոպնակ՝
 եւ կամ զնորա կեր համբարէք, առ մեզ մատերուք, ձեռին ձերոյ են մեր սլէտք։
 Իղծք իմ են, զի թիւրաթեկն այն երիվար հուպ եկեսցէ, առ ի լնուլ զաստուածոց յոյս։
 եւ սուրբ Ռշիք բերկրապատար ընկալցին զհաճոյացեալն աստուածոց։
 Յորժամ փոկով զգլուխ քո կապեն եւ զեզու առ ի սանձել, ո՛վ երիվար,
 եւ կամ ի կեր բուտ ի բերան քո արկանեն, եղիցի այն բարեգուշակ առ դիօք։
 Մինչ ի մարմինսդ նստին մօեղք⁽³⁾, ո՛վ երիվար, եւ յորժամ փայտ եւ սակուր
 եւ կամ դաստակք եւ եղնգունք թացեալ լինին սպանդունւոյ, այդ ամենայն գուշակ
 բարեաց է առ դիօք։
 Մինչ յընդերաց քոց ներքնոց ապավայթի հոտ, որ մտոյ հմայ է հոտ,
 Պաշտօնեայքն զգործ հանեն ի գլուխ, միս խորովի, եւ ձենձերոյ գործ կատարի։
 Մինչ յանդամոց քոց խաչելոյ չամիուր ի գուրս գայ,
 Ոչ ի գետին ոչ ի խոտ անկցի մասն խորովելոյ. ողջոյն դից է այդ բաժին։

(2) Յոպնակ բառը անծանօթ բառից կարգէն կը համարի Հայկազեանը. զի ասոր մէկ վկայութիւն միայն գտուելով Ոսկեբերանի Մատթէոսի մեկնութեան մէջ, եւ այն ալ յուշականի մէջ պակաս, դժուար էր անոր բուն նշանակութիւնը ճանչնալ, անոր համար այլ ընդ այլոյ մեկնութիւններ տուեր է անոր։ — Յո պնակ՝ կը պատասխանէ հնդկաց յո-բ-բառին, որ կը նշանակէ փայտէ ցից, այսինքն գետին ցցած կամ ցցելի հաստ ու շիտակ փայտ. որոյ կը կա զեկն զոչեկի կենդանւոյ՝ պախուրցին օղակն անոր անցունելով։ Իսկ ուրիշ անգամ Ակնեայ կրակը դիւրավառ ընելու համար յոպնակը գետին ցցելէն ետքը այրելի փայտերը անոր յեցունելով կանգուն կը բռնէին։ Առաջեղեալ երգին վեցերորդ տունին մէջ երեք անգամ յիշուած է յոպնակ բառը, ուր յո-բ-բառէն իւր յոպնակահերձ, փայտակոտոր եւ յո-բ-բառէն յոպնակաբեր, փայտաբեր բարդ բառեր են։ Իսկ Ոսկեբերանի թարգմանիչը կը գործածէ յոպնակը այն նշանակութեամբ որ առանց ցցելու գաղափար տալու աւովորէն «բռնէ բառին միտքն ունի. որով ճշտեալ զփայտ եւ զբար այնպէս կրեն պայիւք կամ յոպնակօք» խօսքին միտքը կը պարզի։ Արդ յո պնակ կ'ըլլան այն կարծու ամուր փայտերը որովք շինութեան ժամանակ հող, քար, կիր, ջուր եւ այլ ծանր նիւթեր կը կրեն դործաւորը, նոյնպէս բեռնակրաց երկայն փայտը կ'ըլլայ յոպնակ։ Մեք առ այժմ յոպնակ բառին նշանակութեանը վրայ այսչափ ստուգութիւն ունենալով, ի բաց կը դնեմք Նոր Հայկազեանի սայլակ, սայլիկ, յովանակ, իշուկ բառից մեկնութիւնը։

Ի հնդիկ լեզու յուբա կը նշանակէ նաեւ այն ցցած երկայնածող փայտն որոյ վերայ կը դրուին յաղթութեան նշանները յարձակարանի եւ ասպարէզի մէջ, այն որ Գաղղիացիք trophée կ'ըսեն. հայերենի մէջ յոպնակը այս նշանակութեամբ գործածուած չ'կայ։ Բայց այնդ նշանակութեամբ կայ Մագիստրոսէ մի այլ բառ. կ'ըսէ Վամիմ քեզ եւ ի մերոցն տարացոց Պարթեւաց, զոր չամաշուն անուանեն, այսինքն մանկան ծառ. կամ պատանեաց. զոր ի հանդիսի մենամարտիցն ցցեալ, զարդարեն յոգնութիւ կարասեաց գանձու. եւ որ յ'ստադինն եօթանցն յաղթէ, պարգեւօք պսակեալ՝ նմա եւ զայն ձիր ընծայեն։ Այս չամաշուն բառին իսկականը դեռ գտած չ'եմ։

(3) Մօեղն շատ կերպով գրուած կը գրուի մեր գրոց մէջ, եւ տակաւին անոնց նշանակութեան զանազանութիւն տրուած չ'է։ Սովորաբար կը հասկացուի մանր ձոնձեր. եւ յատկապէս այն չարածիճի նուագաւոր փղբրիկ ձանձերն, որ ձանձրութիւն են գիշերային ժամուց, եւ իրենց խայթուածքով վտառուցիչ. այս կարգի մօեղներուն հնդիկք maça, maçaka կ'ըսեն, որ են դաղկարէն moustiques ըսուածները։ Իսկ maksha, makshika կ'ըսեն նշանակեն ձանձ, լտ. moucea եւ Գղ. mouche եւ այն ձանձրացուցիչ մաշկաթեւք, որ աղտեղի բաներ կը սիրեն եւ գիշայնովը կը հեշտանան։ Ես առաջիկայ երգին իններորդ տունի մէջ մօեղ բառը ձանձի նշանակութեամբ դրի բնագրին մօռչէմ ձայնը պահելու համար։

Որ զերիվար տեսեալ որ պախ ասասցէ ի՛շ քաղցրաբոյր է խորտիկ, հա՛տ ինձ անտի,
Տացես նմա, եւ ոյց խնդրեն խորովածոյ կերակուր:
Սակայն բերին զոսան մանց եւ զսկահս արգանակի
Զպոռտնարդ զկաթսայս եւ զսպաս եփոցի, զորս կարգեցեն առ ձիով:
Գնացք քո եւ նիստ, ո՛վ երիվար, կալ առ ի կող եւ ոտընկալ,
Ըմպել, ուտել, այդ ամենայն դուշակ բարեաց է առ դիօք:
Մի՛ քեզ Ակնի ի դող հարեալ զհոտ ծխոյ ընկեացէ, եւ մի՛ անօթք խանձրահոտինք եղիցին,
Զխախորով որ է անաղտ, որ կատարեալ, որ կոչմամբ, հաճոյական դտցի դից:
Յորժամ զձիով տարածանեն ծիրանախայլ քող ծածկութի,
Եւ կամ պնդեն զգլուխ եւ զոտն, այդ ամենայն բարեգուշակ է առ դիօք:
Յասպաստանի մինչ խրխնջես դու մեծապէս, եւ զքեզ կեղեն ոտամբ եւ խթանաւ,
Զայդ ամենայն աղօթիւք ես ցրեմ՝ որպէս դարգալաւ հոսի նուէր:
Զերեսուն չորս կողս հատանէ սուր երիվարի՝ բարեկամի աստուածոց,
Թող ամբողջ, ո՛ ձիասպանդ, զայլ անդամս, մէն մի կացցեն. այս օրէնք,
Մի գործօն ի պատահել յերկրարն, եւ երկուք շատ են առ ի ունել զնա զուսպ.
Զմաստունս, որ ինձ անկանի ըստ օրինի նուիրել, առից չօթի վերայ, արկից Ակնեայ ի ձօն:
Ի մեկնել քո աստի զչարիր մի՛ ընդ քո բաղդ. ոչ կացցէ շատ սակուր ի քո վերայ.
Խժային որ՝ ապաշնորհ զինահար մի՛ յօշեացէ զմարմնա քո երկաթով:
Ոչ այդպէս մեռցիս դու. ցաւք չեն վասն քո. ընդ ճանապարհս յաջողս են ելք քո առ դիւ.
Առ ի չուել աստի են քո զոյգ մի երիվար, զոյգ այծեմունք, ի թեթեւ կառս լծեալ
մի բուռակ:
Ետքի տողին միտքն այն է որ աստուածահաճոյ երիվարն երկինք վերանալու համար
ունի զինքը վերացնող ինտայի երկու ոսկեղէն ձիերը, Մարուդ հողմաստուածներու եր-
կու այծեամները, եւ երկու Ասվիններու թեթեւ կառքը, որոյ լծուած է մի էշ:

ՍՏԵՓԱՆՈՍ ԵԱԶԸՃԵԱՆ

ԱՌՈՂԶԱԲԱՆ ԱԿԱՆ

ԳԱՂՂԻԱԿԱՆ ԱԽՏ

ԵԻ

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Շատ անգամ կը պատահին մեզ երիտա-
սարդներ՝ որոնք քիչ կամ շատ հեռու ժա-
մանակներու մէջ գաղղիական ախտով վա-
րակուած լինելով դարմանել տուած են զի-
րենք եւ չունին առժամապէս որ եւ է նշան
յիշեալ ախտէն: Անոնք ամուսնանալ ուղե-
լով կը դիմեն բժշկին հարցնելու թէ կրնա՞ն
առանց ծանր հեռեւանաց կարգուիլ:

Կան այնպիսի նշանաւոր բժիշկներ ո-
րոնք բնաւ հրաւան չեն տար անգամ մը
հիւանդութեան ամուսնանալու: Բայց
այդպիսի բացառութիւն մը անտեղի եւ ան-
բանաւոր է. որովհետեւ այս օր կրնամք
եւ թէ, եւ թէ հարկը հիւանդ տեսած եմ,

ուրիշաւոր առնուազն կատարած են առողջ
մարդու դերը եւ զաւակներ ունեցած: Բայց
որ պարագայներու մէջ ներելի է գաղղիա-
կան ախտ մ'ունեցողի ամուսնանալ: Ահա
այս է բուն քննելի խնդիրը:

Պէտք է գիտնալ նախ թէ՛ այնպիսի հի-
ւանդ մը վտանգաւոր է իւր կնոջ, զաւա-
կաց եւ հասարակաց շահուց համար:

Վտանգաւոր է կնոջ համար, որովհե-
տեւ անկարելի է զայն չթունաւորել մինչեւ
իսկ արտաքին վէրք եւ չունենայ. ասոր
համար ըսուած է թէ գաղղիական ախտը
օրուան հացին պէս կը բաշխուի ամուսնոց
մէջ:

Վտանգաւոր է վաւակացը համար, քան-
զի անոնք կա՛մ կը վիժին իրենց մօր ար-
դանդէն եւ կա՛մ եթէ ծնանին, հիւանդոտ
կը մնան:

Վերջապէս վտանգաւոր է հասարակային
չահուց համար, որովհետեւ կրնայ շատ ան-
հատներ ապականել իրեն պէս:

Ձատնը ի նկատ առնելով կրնանք Պ.
Ֆուռնիէ նշանաւոր դաղղիախտաբանին հետ
թոյլ տալ դաղղիախտաւորի մը ամուսնանալ
հետեւեալ հինգ պարագայից մէջ.

1. Կարգուելու մարդը գաղղիական ախ-
տէն որ եւ է արտաքին, երեւելի նշան մը
ունենալու չէ: Այս պայմանին կարեւորու-
թեան վրայ պնդել իսկ արժան չէ. բայց
շատ անգամ տեսնուած է որ ոմանք առ
կատարեալ ազդեցութեան, եւ այլը հա-
րուստ օժիտ մը կամ կարեւոր դիրք մը
ձեռքէ՝ չփախցնելու համար, կ'ամուսնանան
գաղղիական ախտի բոլոր երեւելի նշանները
կրելով: Այս տեսակ մարդիկ թեթեւասկի,
կասկածոտ եւ տկարամիտ լինելով գայթակ-
ղութեան մը առարկայ ըլլալէ կը վախճան:

2. Որչա՛մ հին է գաղղիական ախտը,
այնչա՛մ կը տկարանայ փոխանցման հաւա-
նականութիւնը: Ասոր օրինակ ըլլալու հա-
մար յիշենք հետեւեալ՝ զոր Պ. Միքէօն կը
պատմէ: Մարդուն մէկը վրան դեռ նոր
գաղղիական ախտի նշաններ կրելով կ'ա-
մուսնանայ. կինը ութը անգամ յղի կը մը-
նայ եւ հետեւեալ կերպով կը ծնան: Ա-
ռաջին սաղմը հինգերորդ ամսուն կը վիժէ.
երկրորդը՝ եօթներորդ ամսուն. երրորդը՝
մեռած կը ծնի. չորրորդը եւ հինգերորդը
ողջ կը ծնանին, այլ գաղղիական ախտի նը-
շաններ կը կրեն. վեցերորդը, եօթներորդը
եւ ութներորդը ողջ եւ առողջ կը ծնին:
Ասկէց կը հասկցուի որ ժամանակը ախտը
կը մաշեցնէ, վստն որոյ Տօքթ. Ֆուռնի է
խստիւ կը խրատէ դռնէ երեք Գաբի չափած
չամուսնանալ:

3. Պէտք է որ գաղղիական ախտի եր-
կրորդական նշաններուն անհետանալէն վեր-
ջը մէկ ու կէս կամ երկու տարի անցնի, որով
վստահութիւն կ'ունենայ մարդ ախտին տը-
կարացման մասին:

4. Ինչպէս ամեն հիւանդութիւն մէկ
չըլլար, նոյնպէս գաղղիական ախտը ամէն
մարդու վրայ մի եւ նոյն սաստիկութեամբ

չյարձակիր. «Ա. Ֆիլիս կայ, ու սիֆիլիս ալ
կայ» կ'ըսեն վարպետները: Պ. Ֆուռնիէ կը
պատմէ թէ հիւանդ մ'ունի զոր վեց տարի
անդադար խնամելով հանդերձ դեռ չէ յա-
ջողած կատարելապէս բուժել. այսպիսեաց
համար ճիշդ է այն կարծիք որ բնաւ չներեր
գաղղիական ախտի զոհերուն ամուսնանալ:
Ես տեսայ Թագսիմի գաղղիական հիւան-
դանոցի մէջ մի երիտասարդ դեղագործ որ,
հակառակ իրեն չապրեալ անդուլ եւ ի-
մասնագոյն խնամոց, չկրցաւ ազատիլ չա-
րատիպ գաղղիախտէ մը ու մեռաւ:

5. Վերջապէս պէտք է որ ախտացեալը
բաւական երկար ժամանակ կանոնաւոր
գարմանաց եւ դեղաբուժութեան ենթա-
կայ լինի, առանց որոց անհնար է որ ա-
մուսնանայ: Գեղաբուժութիւնը թոյլ չտար
ախտին հիշնալ ու սաստկանալ. կը նուա-
զեցնէ վարակման ու փոխանցման հաւանա-
կանութիւնը, եւ ժառանգականութեան
տեղի չտար: Այդ մասին օրինակ մը յիշեմ
որ յոյժ հրահանգիչ է: Գաղղիախտացեալ
կին մը եօթը անգամ յաջորդաբար կը վիժէ.
այն ատեն դեղ առնելու կը սկսի եւ ութ-
ներորդ ու իններորդ յղութիւնը կ'աճեա-
ւորապէս կը վերջանան. ասոնցմէ ետք կինը
նորէն կը թողու դեղը եւ տասներորդը կը
վիժէ: Տասնեւմէկերորդ անգամ յղի մնալէն
առաջ եւ յղութեան ժամանակ նորէն դեղ
կ'առնէ եւ ողջ առողջ գաւտի մը կը ծնանի:

Ահա ասո՛վ ասոնք են այն ամենակարե-
ւոր պայմաններ՝ որոնց գործադրութեան
պէտք է աշխատի ամէն ախտացեալ, զի իւր
դէմն ունի իւր կնոջ, իւր վաւակաց եւ
հանրութեան չահերը:

ՏԲ. Ռ. ՌՕՊԵՆՍՈՆ

Յ. Գ. Շնորհակալութիւն առ Մեծ. Նշան Է-
ֆէնտի Ղուկասեան, ուսուցիչ ի բժշկական վարժա-
րանի, Յակոբ Էֆէնտի Ալեօնեան (կետիկ-փաշա),
Բագարատ Էֆէնտի Ամբասեան (Մայկարա), եւ այլ
բարեկամ՝ որք իրենց գոհութիւնը յայտնած են մեզ՝
բերանացի թէ գաւոր՝ մեր առողջարանական յօդ-
ուածոց համար, որոնց նպատակն է մեր հասարակու-
թեան մէջ տարածել առողջապահութեան ամեն օգ-
տակար սկզբունքները:

ՆՈՅՆ

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ

ՔԱՐԻՋԷՆ Ի ԼՈՆՏՐՈ ՄԷԿ ԺԱՄՈՒ ՄԷՋ

Ֆրանսայի մեծատաղանդ երկրաչափ
մը, Պ. Պէրլիէ, Ֆրանսայի թղթատարու-
թեան եւ հեռագրոց նախարարութեան
ներկայացուցած է վերջերս յոյժ տարօրի-
նակ ծրագիր մը :

Ըսենք նաեւ յոյժ յանդուգն, եւ չափա-
զանցած չափի լինինք :

Խնդիրը ճնշեալ օդով խողովակի մը վրայ
է որ հինգ հարիւր հազարամեթր երկայ-
նութիւն պիտի ունենայ եւ գրեթէ վայր-
կենական հաղորդակցութեան մէջ պիտի
դնէ զՓարիզ եւ Ղլոնարա, աշխարհիս եր-
կու քաղաքներն որք ամենէն ընդարձակ
կերպիւ կը թղթակցին իրարու հետ :

Այդ անյուսալի առաջարկութեան հե-
ղինակը նորեկ մը չէ : Պ. Պէրլիէ արդէն
ծանօթ է ճնշեալ օդոյ վրայ կատարած այլ
եւ այլ փորձերով : Եւ որովհետեւ իւր նոր
գաղափարն սկսած է արդէն արձագանդ
գտնել Փրանսական մայրաքաղաքին մէջ,
ուստի աստ կը պարզենք Պ. Պէրլիէի դրու-
թիւնը՝ քաղելով փարիզեան լրագրէ մը :

Ամեն մարդ գիտէ թէ ինչպէս կը գոր-
ծէ ի Փարիզ այժմ օդահան թղթատարու-
թիւնը : Ստորերկրեայ խողովակներու միջո-
ցաւ փոքրիկ գնտակներ կը զրկուին, որք կը
պարունակեն հեռագրական քարտեր : Ճնշ-
գործին, եւ թղթակցութեամբ լի գնտակն
թաղային գրասենեկէ մը կեղրոնական գը-
րասենեակը կ'երթայ, եւ փոխադարձաբար :
Պ. Պէրլիէ խորհած է թէ այդ վայրկենական
թղթատարութեան դրութիւնը կարելի է
ընդարձակել :

— Եթէ խրամատ մը փորուէր, կ'ըսէ,
հիսկային երկաթուղեաց գծին երկայ-
նութեամբ, եւ եթէ այդ խրամատին մէջ
հաստատուէր 60 սանթիմէթր տրամագծով
ձուլածոյ երկաթէ խողովակ մը, ոչինչ ա-
ւելի դիւրին պիտի լինէր քան թղթակցու-
թեամբ լի գնտակներ զրկել Փարիզէն ի
Քալէ, ապա Քալէէն ի Տուվր՝ նմանօրինակ
խողովակաց միջոցաւ, եւ վերջապէս Տուվ-
րէն ի Լոնտրա : Երկու մայրաքաղաքաց մի-

ջեւ հեռաւորութիւնն է 475 հազարամեթր,
դնենք 500 հազարամեթր : Եւ յայտնի է թէ
թղթատարական դնտակ մը կրնայ՝ առանց
կանգ անելու՝ կտրել անցնիլ այդչափ հե-
ռաւորութիւն :

Պ. Պէրլիէ հետեւեալ կերպիւ կը նկա-
րագրէ իւր դնդակն. տեսակ մը ուռմբ պի-
տի լինի այն, որոյ արտաքին եւ ներքին խա-
ւերն այն կերպով շինուած են որ կարենան
արգելուլ արագութեան յառաջ եկած տա-
քութիւնն : Գնտակին ճարտարութեամբ կողմե-
րէն մին պիտի լինի վերջին կեղեւն, կազմ-
ւած կակուղ երկաթեայ փոքր գամբէ, որով
իւր մեկնման ատեն կենդանի ողնիկ մը տես-
քը պիտի ունենայ եւ ժամանման միջոցին
մեռած ողնիկ մը տեսքն, այսինքն շփումէն
մաշած :

Այս գնտակն, Փարիզու կայարանէն
մղեալ օդոյ ճնշմամբ, որ դիւրաւ կրնայ
այսպիսի արդիւնք մը յառաջ բերել, երկ-
վայրկեանի մը մէջ 140 մէթր տեղ կտրելով
անցնելով, Փարիզէն Լոնտրա պիտի հասնի
մէկ ժամու մէջ, անցնելով Ֆրանսայի հիւ-
սիսակողման նահանգներն, Քալէի նեղուցն
եւ Անգլիոյ հարաւային կոմսութիւններն :
Արդիւլու համար արագութեան կորուստ-
ներն, որք յառաջ կուգան անպատճառ բը-
նական օրինաց ամեն ընդդիմութիւններէ,
Պ. Պէրլիէ՝ Քլէրմոնի, Ամիէնի, Նուայէլի,
Պուլոնի, Քալէի եւ Տուվրի մէջ ճնշեալ օ-
դոյ մթերանոցներ կը հաստատէ, ուսկից
գնտակն անցնելու ատեն նոր ճնշում եւ զօ-
րութիւն ստանալով, պիտի կրնայ պահել
իւր արագութիւնն մինչեւ ցնդատակակէտ :

Ինչպէս կ'երեւի, ոչինչ աւելի ճարտա-
րապէս յղացեալ է քան այդ գիւտն, որ ի
գործնականի այնքան օգտակար արդիւնք-
ներ կրնայ յառաջ բերել :

Արդարեւ, կ'ըմբռնուի՞ այդ դիւրու-
թիւնն զոր պիտի ունենայ ամեն մարդ, եր-
կու ժամուան մէջ նստակ մը զրկելով ի
Լոնտրա եւ պատասխանն ընդունելով :

Բայց ինչ որ աւելի չահադրդիւ է, սա
պարզ միջոցն է զոր ի գործ կը դնէ Պ.
Պէրլիէ՝ օրն ի բուն ամեն երեւ վայրկեանը
անդամ մը դնտա՝ գնտակի դաւ զրկելու
համար :

Իրաւ է թէ մէկ ժամուան մէջ Փարիզէ
ի Լոնտրա նստակ զրկելու իրողութիւնն ինք-

նին նշանաւոր բան մ'է, բայց օրը քսան և չորս գնտակ անբաւական պիտի լինէր, ի նկատ առնելով երկու մայրաքաղաքաց միջեւ ժողովանկութեան նամակաց անհուն թիւնն։ Պ. Պէրլիէ մաթեմատիքական կերպիւ վստահ է թէ պիտի կրնայ գնտակ գնտակի վրայ դըրկել, ամեն վայրկեան եթէ հարկ լինի։ Ասոր համար կը բաւէ իրեն պարաս միջոց մը վէն մի գնտակի միջեւ։

Այնպէս որ 500 հազարամէթր երկայնութիւն ունեցող հսկայական խողովակին ներքնակողմն երբ մտացդ առջեւ բերես, պիտի նմանի ճանրու մը՝ որով վրայէն բազմաթիւ անձինք կը վազեն միւս նոյն արագութեամբ, մին միւսին ետեւէն ընթանալով, եւ պահելով իրենց հեռաւորութիւնը մինչեւ ցնդապատակակէտ։

Կերեւակայութիւն նամակաց, լրագրաց, թղթատարական պայուսակաց, յայտարարութեանց այդ մշտնջենական երթեւեկն ընդ մէջ Փարիզու ու Լոնտոնի։ Այլ եւս հարկ չպիտի մնար թղթատարական կառաց, եւ ոչ ալ հեռագրաց, որովհետեւ այդ ճընշեալ օդով թղթատարութիւնն ամենուն տեղը կը լնու։

Քանի որ տեղն եկած է, աւասիկ քանի մը թուանշաններ, քաղեալ Անգլիոյ թղթատարական վարչութեան վերջին տեղեկագրէն։

1884 ին, Փարիզէն ի Լոնտոն դրկուած են 7,555,770 նամակ, եւ 7,127,700 լրագիր կամ տպագրեալ թուղթ, այսինքն ընդ ամենը 14,683,400։

Ի փոսարէն, Լոնտոն Փարիզի դրկած է 8,247,200 նամակ եւ 4,579,400 լրագիր կամ տպագրեալ թուղթ, այսինքն ընդ ամենը 12,826,600։

Պ. Պէրլիէի յղացած խողովակաց, մեկնման եւ ժամանման գործարանաց եւ օդոյ ճնշման երկրորդական մթերանոցաց գետեղումն գերմարդկային աշխատութիւն չպահանջեր։ Քալէի նեղուցին համար, Պ. Պէրլիէ պիտի գործածէ իրարու մէջ մտցուած խողովակներ, քառաւորով պատած, որ կրնայ ամեն բանի դիմանալ։ Հեռագրական պարանոց նման պիտի հաստատուին, եւ տարակոյս չկայ թէ քիչ ժամանակուան մէջ ծովուն յատակին հետ պիտի միանան

իրենց կաշող կենդանատուններով, թուրատարներով եւ այլ զանազան մարմիններով։

Պ. Պէրլիէ հաշուած է թէ այս անհունապէս պարզ աշխատութեան ծախքը պիտի լինի 54,000, 00 ֆրանք։ Սուղէ, բայց ի՞նչ գեղեցիկ պիտի լինի։

Փարիզեան թերթն, ուսկից կը բաղենք այս տեղեկութիւններն, յոյս յայտնելէ յետոյ թէ այդ գաղափար ժամ առաջ ի գործ դրուի, սա երգիծական տողերը կը յաւելու, ակնարկելով այն մերժման զոր Անգլիացիք ցոյց տուին Քալէի նեղուցին տակէն շինուելիք ներքնուղոյ մը գաղափարին, պատճառելով թէ անգլիական ազգն կրնար վրտանգի ենթարկուիլ այդ հաստատութեամբ։

«Այս գաղափար բացարձակապէս գործնական է, եւ վաղն իսկ եթէ ուզուի՝ կարելի է իրագործել զայն։

«Միայն թէ անգլիական կառավարութիւնն, այս անգամ ալ տարտամ անհանգստութենէ մը պաշարեալ, վերստին չընդդիմանայ 80 սանթիմէթր տրամագծով հաղորդակցական ճանապարհի մը՝ Քալէի այդ պահապան նեղուցին ներքեւ, զոր Անգլիացիք անբնական նշանքն կը կոչեն այնքան փառապանծ կերպիւ։

«Իրաւ որ, եթէ առտու մը յանկարծ ֆրանսական բանակ մը ոտք կոխէր անգլիական հողին վրայ՝ խողովակաց միջոցաւ։ Արդարեւ այդ բանին համար լիւրբութիւ պէտք է լինիլ։ Բայց ձօն Պըլ (Անգլիացոց տրուած մականուն) որ նրբամիտ ծնած է, գիտէ թէ դպրոցական գինուորական վաշտեր ունինք...»։

ՀԱՅԿԱՔԱՂ

Տ Ե Ղ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ա. Կ Ն (1)

Ա.

Աւելի իւր անցեալով քան ներկայ վիճակով գերահռչակեալն Ակն յաւէտ արժանի է հետաքրքրութեան. եւ ուղեւոր մը որ պատեհութիւն կ'ունենայ այցելել նմա, իրաւունք չունենար կարծելու թէ սին հե-

(1) Իմ «Ճանապարհորդական յիշատակարան»-ն քաղեալ։

տաքըրբութեան մը զոհ եղաւ : Թէպէտ ոչ բազմամբոյս եւ բազմատարած կամ մեծազանգուած , բայց մարդկային ձեռքն՝ բնութեան աջակցելով՝ այնպէս բազմազան ու գեղազուարճ դարձուցեր է զԱկն որ իւր նշմանը դուն ուրեք կը գտնուի Թուրքիոյ այն դաւառաց մէջ յորոց Եփրատ , Տիգրիս եւ Երասխ կը հոսին :

Կառուցուած է Ակն միջավայրի մը վրայ որմէ հեռու են Երզնկա եւ Քարբերդ 28 անկան ժամ , Արաբկիր 8 , Զմէկածագ 14 , Տիվրիկ 12 : Նոյնպէս մերձակայ են իրեն Քէմախ (նախնի Ամրոցն) եւ Կիւմիւշ-Մատէն (նախնի Կապան) աւաններն : Զորս կողմանէ 8 անկան ժամ տարածութեամբ իսպառ քարերէ , լեռնակոհակներէ , գերբուկներէ , գաւաղէժներէ եւ սարաւանդներէ շրջապատեալ երկրի մը կեդրոնը քաղաք հիմնելու համար Ակնեցիք միայն կարողութիւն ունենային թերեւս , զի այսպիսի մի վայր ուրիշ խիստ շատ դաւառաց մէջ մեք տեսած ենք բոլորովին ի բաց թողուած եւ ոչ իսկ թափառիկ դուարածականաց մատչելի , վասն չգոյութեան արօտի : Բայց Ակնեցիք , որոց քաղաքացիք Անիի , իսկ Ապուշեխի ու Կամարկապի բնակիչքն Վասպուրականի գաղթական լինիլ կը թուին , կրցած են նուաճել բնութեան այդ անհամբոյր կորդաստաններն , քարային զօրութեան այն կըռուաններն , զի սկսեալ տանց արեգակնակներէն , պատշգամներէն եւ կահկարասեաց ամենանորբ ճարտարագործութենէն մինչեւ փողոցներու յետին անպիտան քարն , խնձն ու աւազն մասնաւոր հոգածութեամբ ու յատուկ աշխատութեամբ եւ ծախքով կարգաւորուած կամ զետեղուած են : Քարալերան մը առաւարին զաւիւկայր կողին վրայ արուեստական թումբեր կանգնելով հարթ կամ նուազ հակեալ մակերեւոյթ ոտեղծել՝ փոխադրելով անդ ի հեռուստ հող եւ աւազ պարտէզի կամ որթատունկի վերածելու համար զայն , ամեն երկրի բնակչաց համար սովորական գործ մը չէ գէթ Ասիոյ այս կողմերու մէջ , զի կը պահանջէ նիւթական կամ տնտեսական կարողութեան լծորդուած բարեկեցութեան ճաշակ ու զգացում , յորում Ակնեցւոց աստիճանը գերազանցապէս կը փայլի : Եւ մարդ պատկառանք կը զգայ նոցա փողոցներէն անցած ատեն երբ ի յուշ

ածէ թէ օամ . վեհապետաց ու նախարարաց պետական ծառայութեանց միջ երբեմն այնքան փայլող մեծանուն Ամիրայից քաղմաց հայրենիքն է այն քաղաքը , ուր կը թուի ուղեւորին նշմարել նոցա մեծութեան ու փառաց կանգուն կամ խոնարհեալ քաղմագունակ նշխարներ եւ յիշատակարաններ , որոց նայելով կամ նոցա պատմութեան տեղեկանալով միայն կարելի է ըմբռնել թէ ինչպէս իսպառ այն քարուտ եւ նեղ ծորակի մէջ հնար եղեր է կանգնել այնքան գեղատեսիլ մի քաղաք , որ Եփրատայ եղերքէն աստիճանաբար կ'ամբառնայ աջակողմեան բարձրակատար լեռան կողը ամբիթէտորանաձեւ , իբր մէկ հազարամետր բարձրութեամբ եւ երեքկին երկայնութեամբ : Եւ եթէ ոք ամենէն բարձրագոյն տան մը վրայ կանգնած դիտել ուզէ այն երեւոյթը խառնեալ տուններէ , եկեղեցիներէ , մզկիթներէ , ծառերէ , պարտէզներէ , որթատունկերէ , ջաղացքներէ եւ բլրազան արուեստաւորաց դործատեղիներէ և՛ և՛ , որք անկանոն բայց զուգադէպ ներդաշնակութեամբ կը լծորդ ուին իրարու , յայնժամ պիտի հաւատայ քաջիկ , եթէ երբեք կը տարակուսէր , թէ մարդը մեծ գործակից մի է բնութեան որք իրարու պակասը կը լրացունեն : Գեղափայլ եւ գեղազուարթ ովասիս մի է Ակն քարային մեծ անապատի մը մէջ , որ եթէ ոչ ինչ հրապուրիչ տեսիլ չունենար իսկ , իւր եղերքը ծեծող Եփրատի մեծափառ խոխոջանքն եւ անապարար խաղացքն բաւական էին , թող անոր բազմադիմի առաւելութիւններն , զի նա է որ կը բերէ լաստափայտերով Ակնայ գրեթէ ամեն պիտոյքը , ինչպէս ծովեր կը տանին ծովեղերեայ քաղաքաց հարկաւոր եղածներն : Սակայն Եփրատ հոսանքն ի վար եւ եթ նաւարկելի լինելով , հաղորդակցութեանց զիւրութիւն փոխադարձ չէ , եւ այդ պատճառաւ ահա կառավարական հրամանաւ ձեռնարկուած է ցամաքային ճանապարհին շինութեան , գործ արդարեւ խիստ դժուարին , բայց եւ կարի յոյժ հարկաւոր , զի եթէ Ակն յարգարեալ ճանապարհաւ միանայ Երզնկայի ու Քարբերդի , յայնժամ քաղաքական եւ զինուորական խիստ մեծ կարեւորութիւն կը ստանայ , ազատուելով իւր արդի կղզիացեալ անձուկ վիճակէն եւ իյնալով

Պաղտատի մեծ եւ կարեւոր պողոտային վերայ, ըստ որում աւելի կարճ կը լինի այդ պողոտայն երբ Տրապիզոնէն Երիզայի եւ Ակնայ դիմով հասնի Բարբերդ, քան ինչպէս որ այժմ Սամոնի կամ Կիրասոնի ուղղութեամբ: Եւ արդէն այդ հաշուով ու յուսով սկսուած է Ակնայ առաջարկաց վրայ ճանապարհի պատրաստութիւն, որ բազում աշխատութիւն եւ ծախք կը պահանջէ:

Հետաքրքրական է քաղքիս Ակն անուան պատմութիւնն որ այսպէս կ'աւանդուի: Ողբացեալն Անիի յղբայի կործանումէն վերի նորա հայ բնակչաց հարուստ ու կարեւոր մի մասը նոր բնակավայր մը փնտռելու համար կը մեկնի աւերեալ հայրենիքէն եւ կը հասնի Ակնայ ձորը, Անի Ամրոցի սոսկալի նեղ կապանէն անցնելով, եւ պատահելով այս ձորին մէջ լեռնէն հոսող մի առատ ջրոյ, կը ցանկայ գտնել նորա Ակն. եւ երբ կը յաջողի, կը հիմնէ անդ քաղաքն որ ջրոյն Ակն անունը կ'առնու: Ինքաբուզիս ջրոյ այդ առուակն, որ Ակնայ բոլոր ջրոյ մատակարարիչն է եւ առանց որոյ չկրնար ապրիլ այդ քաղաքն, բնութեան ամենագեղեցիկ տեսարանաց մին կ'ընծայէ. ոչ միայն զի կը բղխի համակ քարաժայռերու մէջէ, այլ եւ զի մէկ հազարամետրի չափ բարձրութենէ կը դահալիթէ մինչեւ Եփրատ գետը ահեղագոյ որոտմամբ, խլացուցիչ շառագմամբ եւ աննման սպիտակութեամբ, սլողալըն եւ բիւրաղան երեւոյթից ներքեւ թաւազըր փրփուրներ արձակելով, ակնապարար, վեմափառ, սքանչելափայլ: Ի ճանապարհին՝ որ համակ քարակորկառ է, կը դարձնէ բազմաթիւ ջաղացքներ եւ բիւրաւոր խողովակներով կը բաժնուի հասարակաց տուներն: Բայց Եփրատայ մէջ հոսողն դեռ մեծագոյն մասն է: Հաղիւ թէ այլուր հնար լինի սորա ընծայած տեսարանին նըմանը գտնել ի բնութեան, զի կը տարբերի սա այնպիսի ջրվէժներէ, որք մեծ բարձրութենէ մը վար կը հոսին ուղղաձիգ՝ թողլով իրենց ետեւ ահագին պարապութիւն մը. իսկ Ակնայ ջուրն իր բոլոր ընթացից մէջ կարի ձգ գլուխվայրի մը վրայ կը թաւալի սարսափելի բազմամբ քարակորկառներու, որք յաւիտենական պատերազմի մէջ են այդ հեղուկ մարմնոյն դէմ, բայց միշտ կորած նորա մշտնջենաւոր փրփուրներուն մէջ, ինչ-

պէս Մաֆիի դադարը ձեռնց ներքեւ: Իւր ըրանցումը զիրքն եւ Եփրատի ընթերակացութիւնն բնականաբար կը պարզեւեն Ակնայ ընտիր եւ առողջարար օդ, դով եւ անորժելի յամարայնի, նուազ ցուրտ ու անտանելի ի ձմեռայնի, զի ամէն կողմէն շրջապատող բարձրաբերձ լեռներն կը սպառնարեն տօթագին խորշակէն եւ ցրտագին բորեասէն:

Հին ժամանակներն երբ այժմու հաւասար ապահովութիւն չկար, Ակն մեծապէս կարող էր արհամարհել խժաբարոյ հուզկահարաց արշաւանքն, զի իւր Արեւելեան եւ Արեւմտեան ամենանեղ ու դժուարակիս կապաններն բռնելով կրնար արգելուլ ամէն յարձակումը: Հիւսիսէն ու հարաւէն Ակն մտնելու համար դրեթէ բացարձակ անհնարութիւն կայ լեռներու երեսէն: Իսկ կապաններէն մէկ մէկ մարդ ետեւէ ետեւ միայն կարող են անցնիլ, այնչափ ահա նեղ ու դժուարուա են: Հաւանորէն կարեւորապէս ի նկատի առնուած է Ակնայ բնական այս ապահով դիրքն երբ կը հիմնուէր այն: Եւ արդէն բոլոր հին քաղաքներն ընտրանօք կառուցուած են միշտ անառիկ եւ տոկուն դիրք վրայ:

Նշանակութեան արժանի է Ակնայ ձորին մէջ արձագանդի սաստկութիւնը: Ամենափոքր մի ատրճանակի պայթումն այնքան զարնուրելի գոռում գոչում կը պատճառէ որոյ հաւասարը գուցէ հարիւրաւոր թնդանօթներու միահաղոյն պայթմունք չեն կարող առաջ բերել լայնածաւալ դաշտերու մէջ: Ադ կէ աւելի ահաւոր եւ սարսափելի է երկնից որոտման գոռումը, որ կը թուի աշխարհի բոլոր լեռնակոյտերու միեւնոյն ժամու մէջ փլուզման ահեղ ձայնը: Անձրեւի եւ կարկուտի տարափն անգամ մեծազորդ շառաչմունքի պատճառ է, զի ձորին մէջ ամենափոքր ձայն սաստիկ արձագանդ կուտայ:

Ղիտելի է նաեւ արեղական շատափոյթ անհետացումն ինչպէս եւ անաղան ծագումն: Ժամ 8-9ի միջոցն արեւը կը ծածկուի ամառները քաղքի վրայէն, եւ մէկ կամ աւելի ժամ յետոյ կ'երեւի առաւօտները քան սովորական ծագումն: Այս ամէն երեւոյթներու պատճառ իւր լեռնային ձորամէջ դիրքն է եւ այդ ձորին յատակի լայնութիւնը Եփրատի լայնութիւնն իսկ է, այսինքն 30 մետրի չափ:

ՄԱՐԿՈՍ ՆԱԹԱՆԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՖԵՆԼԱՆՏԱՅԻ ԵՐԳ

Օրերդիկըն նրա տի յափըն վըտակին,
Ոտիւքն ի ջուր ւ՛ աչկուհնքն ի վեր դէտակն յերկին,
Եւ թըռչուն մի որ զգապար թըռչէր երթար,
Կը դառնանէր առ նա այս կերպ խօսից բարբառ .

«Րզգոյշ կեդիր, օրերդիկ,
Ձի թէ դգետակըն պըղտորես —
Ձերկինք ոչ եւս թափանցիկ
Ի նմա ցոլեալ պիտի տեսնես » :

Եւ այն ատեն աղջիկըն դէպ ի վեր թըռչունն
Բզջայեցուածքս իւր վերուց արտասուածութում,

Եւ պատասխան տըւաւ անոր .
«Եթէ զառուակս այս ես այսպէս պըղտորեմ,
Մի՛ դու ցաւի՛ր շատ , այն նորէն
Պիտի դառնայ ջինջ եւ մաքուր ...

Այլ երբ տեսար դու օր մի՛նմ քովըս տարփածու՛մ
Ինչո՛ւ յայնժամ չեկար ինձ բան մ'ազդ առնելու ,

Ճեշդ այն ատեն քեզ հարկ էր
Հոս կանգ առնուլ եւ ըսել .
Մի՛ աղջկան յուզեր հոգին ...

Պիտի չըլլայ այլ եւս յըստակ յապագային ...
Միշտ մըթագնի պիտի քօզով մ'ըստուերամած .
Կապոյտն երկնից պիտի չցոլայ եւս անդրադարձ »)

Թարգմ.

Ա. ԴՈՐԵԼԼԻ

ԱՐՍՈՒԿԵՍ

ՆՈՐԱՎԷՊ

ՄԱՅՐԸ

Տասնեկինգ տարի եղաւ որ Պիրլոն գըտ-
նուած չեմ : Վերջապէս այս աշնան դնացի
այն կողմերը Սերվալ բարեկամիս հետ՝ քիչ
մը որսորդութեամբ պուրճանալու :

Ուրախ զուարթ կը քայլէի , իսկ առջեւէն
խաղաղով կը վազվզէին իմ երկու շուները :
Հարկւր քայլ հեռաւորութեամբ կուգար ե-
տեւէս Սերվալ :

Անտառին մացառուտ մէկ վայրին մէջ խըր-
ճիթի մ'աւերակները տեսայ յանկարծ մտա-
բերեցի որ երբ 1869ին վերջին անգամ տե-
սայ այս խրճիթը , մաքուր եւ սիրուն էր ,
չըջապատուած գեղեցիկ այգիներով եւ կեն-

դանութեամբ , ու հաւերը դրան առջեւ կը
կուկային անդադար :

Որպիսի տարբերութիւն այն ժամանակ-
ուան եւ այժմեան մէջ : Ի՞նչ կայ աւելի
տխուր քան աւերակ տան մը տեսարանը :

Մտաբերեցի նոյնպէս այն բարի սլառաւ
կիներ որ երբեմն հիւրընկալեց զիս այս խըր-
ճիթին մէջ . եւ բաժակ մը գինի հրամցուց .
յիշեցի Սերվալի ըրած պատմութիւնն այդ
խրճիթի բնակչաց մասին : Հայրը ծերու-
նի որսորդ մ'էր զոր ոստիկաններն ըս-
պանեցին . որդին , զոր երբեմն տեսած
լինելս կը յիշեմ , բարձրահասակ , վոխտ երի-
տասարդ մ'էր եւ ճարտար որսորդի համ-
բաւ կը վայելէր : Վայրենիք կ'անուանէին
զանոնք :

Ձայն տուի Սերվալին եւ հարցուցի թէ
ի՛նչ պատահած էր խրճիթին բնակչաց :

Ահա ինչ պատասխանեց Սերվալ .

— Երբ հրատարակուեցաւ պատերազմը,
Վայրենի որդին որ երեսուն երեք տարեկան
էր այն ժամանակ , մայրը մինակ թողնելով
պատերազմի գնաց :

Չառամեալ կիներ բոլորովին միայնակ մը-
նաց տան մէջ՝ որ գիւղէն հեռի , անտառին
մէկ ծայրը կը գտնուէր : Բարձրահասակ ,
նիհար եւ դաժան էր . ամենեւին չէր ծի-
ծաղէր , ոչ ոքի հետ կատակ կ'ընէր եւ ոչ
կը խօսէր իսկ :

Ձմեռն եկաւ և խրճիթն համակ ծածկը-
ւեցաւ ձիւնի տակ : Վայրենի մայրը շարաթը
մէկ անգամ գիւղ կ'երթար՝ հաց եւ քիչ մը
միս գնելու , եւ ապա դարձեալ կը վերա-
դառնար իւր տնակը :

Եթէ գայերու երեւնալու մասին խօ-
սէին անոր , կը վերցնէր հրացանն եւ դուրս
կ'ելնէր նոցա ետեւէն իյնալու , հանդար-
տութեամբ քայլելով ձիւնի բարձր կոյտերու
վրայէն :

Օր մ'ալ Բրուսիացիներ եկան գիւղն , եւ
բնակչաց մէջ բաժնեցին զինուորները՝ նոցա
կարողութեան եւ հարստութեան համեմատ :
Այդ պառաւ կիներ ալ հարուստի տեղ դը-
նելով՝ չորս Բրուսիացիներ յանձնեցին խը-
նամելու :

Չորս խարտիչադեղ երիտասարդներ էին ,
կատոյտ աչերով եւ փայլուն մօրուքով . հա-
կառակ իրենց կրած տառապանաց եւ նե-
ղութեանց , տակաւին առոյգ եւ քաջառողջ

մնացած էին : Հնազանդ էին պառաւ կնոջ եւ նորա աշխատանաց մասնակից կը լինէին . նաւ ճաշ կը պատրաստէր , իսկ նոքա գործաւորի զգեստով խոհանոցը կը սրբէին , միայտ կը կոտորէին , գետնախնձոր կը մաքրէին , ձերմակեղէն կը լուային եւ թուէր թէ իրենց մօր հանգիստը պահպանող չորս աշխատասէր զաւակներ էին : Բայց զառամեալ մայրն միշտ կը խորհէր իւր վտիտ , նըրբահասակ , արծուենդն , տխրահայեաց աչքերով եւ թուխ պեխերով զաւակի վրայ : Ամեն օր կը հարցնէր զինուորներուն .

— Գիտէ՞ք ուր ուղեւորեցաւ Ֆրանսացւոց քսաներեքերորդ հետեւակի զօրագունդը . զաւակս այն զօրագունդի հետ գնաց :

Ազաւաղեալ լեզուով կը պատասխանէին թէ իսկպէս դայ մասին ամենեւին տեղեկութիւն մը չունին եւ տեսնելով նորա վիշտն ու անհանգստութիւնը , հաղարաւոր չնչին ծառայութիւններ կ'ընէին սիրտը հանգստացնելու համար : Եւ նա յոյժ կը սիրէր իւր չորս թշնամիները :

Գիւղացւոց մէջ չկայ հայրենասիրական ատելութիւն . հասարակութեան բարձր դասուց սեփականութիւնն է այդ . իսկ ստոր դասերն , որք իրենց թշուառութեանց համար աւելի կը տուժեն , աւելի կ'սպաննուին , աւելի կը կրեն պատերազմի սարսափներն , որ աւելի անզօր եւ աւելի անպաշտպան են , չեն հասկնար թէ ի՞նչ է պատերազմական հուրն , ի՞նչ է այն բուռն պատուախնդրութիւնն եւ այն դիւանագիտութիւնը որք վեց ամսուան մէջ կ'ոչնչացնեն երկու ազգեր , որպէս յաղթողն նոյնպէս ալ պարտեալն :

Առաւօտ մը միայնակ էր տունն եւ անհա յանկարծ տեսաւ հեռուն մարդ մ'որ խորճիթի կողմը կուգար . շուտով կրցաւ ճանչել ցրուիչն , որ նամակ մը ներկայացուց զառամեալ մօր : Պառաւն ակնոցներն աչքին դնելով հետեւեալը կարդաց .

«Տիկին Վայրենի , այս նամակ իւր տըխուր բօթով ի խոր պիտի խոցէ ձեր սիրտը : Ձեր զաւակը , Վիքտոր , զնդակով մ'սպաննուեցաւ երէկ : Անոր քով էի , եւ ըստ որում ձեր մասին խօսած էր ինձ հետ եւ խնդրած էր որ հաղորդեմ ձեզ եթէ իրեն զժբաղդութիւն մը պատահի , ուստի կը կատարեմ իւր փափաքը : Պահած եմ

նոր ժամացուցն , զոր կը յանձնեմ ձեզ պատերազմէն յետոյ :

Ձեզ երջանկութեան փափաքող

ԿԵՍՍՐ ԲԻՎՕ»

Նամակն երեք շաբաթ առաջ գրուած էր :

Ձէր լար , յապուշ կրթեալ , զգետնեալ , մինչեւ այժմ աստիճան արձանացած էր որ կարծես թէ տանջանք չէր զգար : Այլ միայն կը խորհէր : «Ահա , այժմ Վիքտոր սպաննուած է» . յետոյ տակաւ առ տակաւ աչերէն արցունքն սկսաւ հոսիլ եւ սիրտը վշտերով լցուեցան : Մին քան զմիւսն սարսափելի գաղափարներով կը ճնշուէր նորա գլուխը : Ալ երբէք , երբէք պիտի չը գրկէր իւր որդին , իւր դիւցազնն : Ոստիկաններն սպաննեցին հայրը , Բրուսիացիք՝ զաւակը . . . Թնդանթի գունդով Երեն կը թուէր թէ կը տեսնէ բոլոր այս քստմնեցուցիչ տեսարանը . կ'ընայ գլուխը , կը բացուին աչերը , եւ նա ատամներով կը կրծէ պեխերուն ծայրերը , որպէս միշտ սովոր էր ընել բարկութեան րոպէին :

Ի՞նչ ըրին նորա մարմինը : Երանի թէ յանձնէին իրեն իւր զաւակի դիակը , որպէս երբեմն վերադարձուցին ամուսնոյն ջախջախուած մարմինը :

Մինչ խեղճ կ'ընէ այս տխուր խորհրդածութեանց մէջ կը տանջուէր , ծայրեր լուեցան : Բրուսիացիներն էին որ դիւղէն կը վերադառնային . նամակը իսկոյն զրպանը դրաւ , սրբեց բոլորովին արտասուքը եւ սովորական կերպով , հանգստութեամբ դիմաւորեց զանոնք :

Չորս զինուորներն ալ ուրախ էին գեղեցիկ ճագար մը բերելուն համար , զոր հաւանօրէն տեղէ մը գողցած էին եւ շուտով կ'ուղէին ճաշակել այդ համեղ պատառը :

Պառաւ իսկոյն եւ եթ նախաճաշիկի պատրաստութիւն սկսաւ տեսնել : Երբ պիտի մորթէր ճագարը , ձեռները բոլորովին թուլեցան եւ դանակը գետին ինկաւ , թէեւ իւր կենաց մէջ հարիւր անգամ կատարած էր այս գործողութիւն առանց յուզում մը զգալու : Զինուորներէն մէկը գործն իւր վրայ առաւ :

Մեռած կենդանւոյն արեան տեսքը , որ տաք տակ ձեռքերու արեան մէջ հոսեցաւ , ոտքէն մինչեւ գլուխ սարսուռ ազդեց նորա

վրայ : իւր առաջ ներկայացաւ զաւելին արիւնալի դիակը . . . :

Ճաշի ժամանակ պատառ մ'իսկ ուտել չը կարողացաւ : Բրուսիացիք նորա միոխարէն կերան բոլոր ճագարը : հեռուէն անտարբեր աչօք կը դիտէր զայնս լռին , բայց արդէն մտաց մէջ սարսափելի գաղափար մը ծընունդ առած էր :

— Զարմանալի բան , տակաւին մինչեւ այժմ չը գիտեմ ձեր անունները , ըսաւ , թէ եւ ամիս մը եղաւ որ միասին կը բնակինք :

Ձինուորները դժուարութեամբ հասկցան նորա միտքն եւ ի վերջոյ ըսին իրենց անունները , սակայն պառաւր ասով չը գոհացաւ եւ ստիպեց որ իրենց ընտանեաց հասցէներն եւս նշանակեն թղթի վրայ , եւ Թէրզը դնելով աչքերուն , ուշադրութեամբ կը քննէր ստորագրութիւններն . յետոյ ծալեց թուղթն եւ գրպանը դրաւ , ուր արդէն կը գտնուէր այն նամակն որ որդւոյն մահը գուժած էր : Երբ վերջացաւ ճաշը , ըսաւ նոցա .

— Ձեզ համար քիչ մը ծառայեմ , եւ սկսաւ խոտ կրել այն հիւղակն ուր կը պառկէին սովորաբար :

Նոցա զարմացումը փարատելու համար հորկ համարեց բացատրել որ այդպէս աւելի տաք կը լինի եւ նոքա սիրով օգնեցին պառաւին : Վերէն վար խոտով ծածկուած , տաք եւ հոտաւէտ սենեակ մը պատրաստեցին . որքա՛ն լաւ է անոր մէջ բնանալ : Վերջապէս Գերմանները իրենց հանգստարանը քաշուեցան այն սանդուղէն , որ ամեն գիշեր կը ծառայէր անոնց :

Հապիւ թէ դուռը փակուեցաւ անոնց ետեւէն , երբ պառաւը վերցուց սանդուղը տաանց աղմուկի , դրսի դուռը բացաւ եւ սկսաւ խոտի դէզեր տանիլ խոհանոցը :

Ժամանակ առ ժամանակ կը լսէր չորս քաջ պատերազմիկներու աններդաշնակ եւ ծուր խրխուղոց :

Վերջապէս պատրաստութիւնները վերջացան , խոտի խուրձ մը կրակը նետեց եւ սպա անդ տարածեց , ուր դրուած էին միւս խուրձերը : Ասպ դուրս ելաւ եւ սկսաւ նայիլ :

Բոցերու պայծառ լոյսը քանի մը բոպէի մէջ լուսաւորեց խրճիթի ներսը եւ նորա կարմրագոյն լեզուները նեղ լուսամուտէն

դուրս ելնելով , կարմիր ճառագայթներով կը փայլէին ձիւնային կոյտերու վրայ :

Սրտամորմոք ճիչեր լսելի եղան յանկարծ տան վերի մասէն . յետոյ կը լսուէր մարդկային ձայներու հռնդրն , ահռելի հեծկլտանք , փրկութեան աղաչանքներ :

Հրային մրրիկը վերի կողմ հասաւ վերջապէս եւ բռնկեցաւ ամբողջ յարդեայ տանիքն . ոլորուն բոցերու ահագին կամարը դէպի երկինք բարձրացաւ : Խրճիթը կայրէր : Այլ լսուէին միայն պատերու քայքայումը , ապակիներու ջախջախումը եւ տարերց կործանիչ զօրութեան ձայնը : Վերջապէս մուխի դէպի մէջ կործանեցաւ հիւղակը եւ վերջին անգամ փայլեցան բիւրաւոր կայծեր :

Հեռուն կը լսուէր զանգակի տխուր ձայնը . իսկ Վայրենաց մայրը տակաւին տրճանացած կեցած էր կործանած խրճիթի առաջ , սպառազինուած իւր որդւոյն հրացանով , որպէս զի եթէ զինուորներէն մին ազատէր , հրացանով սպաննէր :

Երբ ամեն ինչ վերջացաւ , հրացանը բոցերուն մէջ նետեց ուր պայթեցաւ տհեզ դոշիւնով մը :

Ամեն կողմէ կը վազէին ժողովուրդն , գիւղացիք եւ Բրուսիացիք : Ահագին հրդեհի քով գտան պառաւը , հանգիստ կեցած , գոհ իւր վրէժխնդրութենէն : Գերմանացի սպայ մը , որ լաւ ֆրանսերէն կը խօսէր , հարցուց .

— Ո՛ւր են ձեր զինուորները :

— Այնտեղ են , ըսաւ Վայրենացու մայրն անյողդողդ ձայնով , իւր լզար եւ չորցած ձեռքով տակաւին հրդեհի մխացող բոցերը ցոյց տալով :

Նորա շուրջը խմբուեցան ամենքն : Բրուսիացին հարցուց .

— Ինչո՞ւ այրեցաւ խրճիթը :

— Ե՛ս այրեցի :

Ձէին հաւատար : Ակներեւ էր որ գլխադրութիւնն եւ թշուառութիւնը խանգարած էին անոր մտաւորական կարողութիւնները : Բայց որովհետեւ ամենքը չքջապատած զինքն եւ ուշադիր կ'ունկնդրէին , ինքն ալ պատմեց սկիզբէն մինչեւ վերջը , նամակի ստանալէն մինչեւ զինուորներուն վերջին հառաչանքները : Չմոռցաւ եւ ոչ մի մանրամասնութիւն :

Պատմութիւնը վերջացնելէ յետոյ, գըր-պանէն երկու թուղթ հանեց, անդամ մ'եւս ակնոցները դրաւ եւ անոնցմէ մէկը կար-դալով գոչեց.

— Այս, Վիքդորի մահն է: Այս, ցոյց տալով երկրորդ թուղթն, անոնց անուններն է, զորս գրել տուի իրենց ընտանեաց ծա-նուցանելու համար:

Եւ խաղաղ սրտով սպիտակ թուղթը եր-կընցուց սալային, որ ձեռքն իւր ուսի վրայ դրած էր, եւ շարունակեց.

— Դրեցէք թէ ի՞նչպէս տեղի ունեցաւ այս ամենն եւ ըսէք անոնց ծնողաց թէ այդ բանն ես, Վիքդորինա Սիմոն Վայրենահէ-ւրի: Մի՛ մոռնաք:

Սպան չգատասխանեց: Յետոյ յանկարծ գերմաներէն հրաման մը տուաւ, եւ յա-փըշտակելով զպառաւն, տակաւին խրճի միացող պատին քով տարին: Տասն երկու մարդիկ նորա առ դէմ կեցան քսան մեթր հեռուն: Վայրենահէի ամենեւին չէր շար-ժեր: Հասկցած էր ու կ'սպասէր:

Հրամանը հնչեց յանկարծ, որուն հետե-ւեցաւ հրացաններու մեծադրորդ սայ-թիւնն: Պառաւրդ ետին ինկաւ:

Բրուսիացի սպան մօտեցաւ անոր:

Վայրենայ մայրն, որ գրեթէ երկու կը-տոր եղած էր, խորտակուած ու այլակեր-պուած ձեռքերուն մէջ տակաւին բռնած ունէր արիւնաթաթաւ նամակը:

ԿԻՒՅ ՏԸ ՄՈՒՍՍԱՆ

ԱՇԽԱՐՀԱՔՐԱԿԱՆ

ՀԵՐԱԹ

Քանի որ քաղաքական իրաց ներկայ վի-ճակին մէջ, ուր օր ըստ օրէ կ'աւելնան Անդ-լիոյ եւ Ռուսիոյ միջեւ պատերազմի մը հա-ւանականութիւնը, Հէրաթ իւր վրայ կը կեդ-րոնացնէ դիւանադիտաց ուշադրութիւ-նը, հարկ կը համարենք մէկ քանի տեղե-կութիւններ հաղորդել մեր ընթերցողաց այդ պատերազմական կարեւոր գիրքի մա-սին: Եւրոպական մամուլն արդէն ման-րամասն տեղեկութիւններ կը հաղորդէ այդ քաղաքին վրայ, Նոյնի Վրէժա ալ, Բեդրըս-

պուրիի մեծ թերթը, ընդարձակ յօդուած մը նուիրած է Հէրաթի քաղաքական պատմու-թեան եւ աշխարհագրական դրից մասին, զոր ի ստորեւ կը թարգմանենք.

Հէրաթ գաւառի հիւսիսային կողմը կ'իյնան Ռուսաց հպատակութիւնն ընդու-նող Թիւրքմէն ցեղերու Ուսսիաները. արե-ւելեան կողմն Աֆղանիստանը, հարաւային կողմէ աֆղանական եւ պարսկական Սէյս-տանը, եւ արեւմտեան կողմէն Պարսկաս-տանը: Ալէրի-Րուտ գետը իւր նախ արե-ւելեան եւ ապա հիւսիս-արեւմտեան ըն-թացքով կը կտրէ Հէրաթ գաւառը: Քու-տանի մօտ գետը դէպ հիւսիս կը դառնայ, մեր թիւրքմէնական երկիրներու ուղղու-թեամբ: Հէրաթ միջին Ասիոյ գաւառաց համեմատութեամբ ունի բաւական ընտիր ու առողջարար կլիմայ: Ամառային տօթը արեւմտեան հովերէն կը բարեխառնի: Ձը-մեռն ջերմաչափը դէրոյէն քանի մ'աստիճան վար կ'իջնէ, այլ այսպիսի ցուրտը հազիւ քանի մ'օր կը տեւէ. ձիւնն երկու շաբաթ հաղիւ կը ծածկէ գետինն: Գարունն եւ աշունը տարուան ամենալաւ եղանակներն են: Ըստ Խանիքովի, միջին Ասիոյ մէջ ջը-րանցքները այնքան ընտիր եւ լաւ շինուած ու պահպանուած չեն որպէս Հէրաթի ջըր-ջակայքն: Գաւառին պտղաբերութիւնը ա-ռած դարձած է: Հարաւային երկիրներու պտուղներն առատութեամբ կը բուսնին աստ, թէպէտ վերին դարու պատերազմ-ները երկիրը կործանեցին եւ շատ մարդիկ գաղթեցին: Հէրաթ քաղաքը, որ գաւառին մայրաքաղաքն է, Ալէրի-Րուտի աջ եզերաց պտղաւետ հովտին մէջ կ'իյնայ: Քաղաքն եր-կայն քառակուսի մը կը ներկայացնէ, շըր-ջապատուած 15 մեթր բարձրութեամբ հողէ պարիսպով, հինգ դուռներով եւ լայն խրա-մատով, որ ջրով լի է: Բայց թշնամեաց դէմ պաշտպանութեան զօրաւորագոյն միջոցն է քաղաքին արեւելեան կողմը գտնուած ա-նառիկ բլուր մը: Բնակիչք 50,000 հոգի կը հաշուին: Մեծ ճանապարհը հիւսիս արեւ-մրտեան կողմէն հարաւային դուռները կը տանի, ուր կեդրոնացած է վաճառակա-նութիւնը: Այստեղ են շուկան եւ պան-դոնները: Հէրաթի միւս մասերու մէջ քա-ղաքը փոքրիկ տներով նեղ, աղտոտ եւ ման-ուածապատ փողոցներ կը ներկայացնէ: Հին

պալատը նույնպէս բաւական ողորմելի տեսք մ'ունի . մեծ մզկիթը աւերակ է : Հէրաթի ծաղկեալ առեւտուան տունները միշտակ են , իսկ բազմաց հետքն ալ չ'երեւնար : Քաղաքի չրջակայ աւերակները նորա նախկին շքեղութիւնը կը յիշեցնեն : Պարսիկները զՀէրաթ «մարդարիտեայ աշխարհ» կը կոչեն : Ճարտարագիտութիւնն է ընդհանրապէս դիւնադործութիւն , բրդէ եւ մետաքսէ գորգ եւ ասուի պատրաստել . սակայն սկսեալ այն ժամանակէն երբ եւրոպական նիւթերը միտան անդ , այս ճարտարագիտութիւնն դամբան զգամ իյնալու վրայ է :

Հէրաթի առևտրական եւ քաղաքական նշանակութիւնն այն կողմէ մեծ է որ յաջող կեդրոնական դիրք մ'ունի ուսական , աֆղանեան եւ պարսկական պետութեանց միջեւ :

Անդլիացիք եւ տեղացիք զՀէրաթ Աֆղանիստանի եւ Հնդկաստանի բանալին կը համարեն : Բոլոր աշխարհականները Հէրաթի ճանրով մտած են ի Հնդկաստան , այժմ բոլոր առեւտրական կարաւանները միայն այս ճանապարհով կ'երթան եւ ասոր համար է որ թէ՛ Պարսիկներն թէ՛ Անգլիացիք կ'ուզեն գրաւել զՀէրաթ . Անգլիացիք տակաւին 1856 ին Պարսից հետ պատերազմի ձեռնարկեցին գրաւելու զՀէրաթ եւ իրրեւ աւատական տէրութիւն մը իրենց թեւարկութեան ներքեւ առնլու :

Հէրաթ , որ ըստ հին պարսկական յիշատակութեան Հէրաթ-Հէրաւա , իսկ ըստ աշխարհագրիտաց Արիա կը կոչուէր , եօթներորդ դարու մէջ Պարսկաստանի նուաճման ժամանակ Խորասանի հետ միասին Արաքսոց տիրապետութեան տակ ինկաւ : 1056 ին Սելջուկները գրաւեցին զՀէրաթ . երկուստաներորդ դարու կիսուն ամենածաղկեալ վիճակի հասաւ տեղական իշխանաց վարչութեան շնորհիւ , բայց երեքտասաններորդ դարու սկզբին , ճինկիզ-խանի իշխանութեան տակ ինկած էր , որ ի հիմանց կործանեց զայն : Նրկորդ անգամ վերանորոգուելով , երկրորդ անգամ կործանեցաւ Մոնղոլներէն 1291 ին : 1581 ին բոլոր Խորասանի հետ Թիմուր խանի իշխանութեան ենթարկեցաւ , որոյ մահուանէն յետոյ իւր յաջորդները տեղական իշխանաց շնորհիւ , պարտք դնելով որոշեալ հարկ մը վը-

ճարել : 1607 ին քաղաքը Պարսկաստանի հետ միացաւ եւ մնաց մինչեւ 1715 թուականը . սոյն թուին Աֆղանք գրաւեցին զայն , 1838 ին թողուցին եւ 18 տարի յետոյ դարձեալ գրաւեցին : 1828 ին Հէրաթի Սուլթանը Պարսից օգնութեան գնաց Ռուսաց դէմ պատերազմելու : Անգլո-աֆղանեան պատերազմի ժամանակ (1838-42 թուականները) Պարսիկները խորհեցան ընդարձակել իրենց նեղ սահմանը եւ գրաւել զՀէրաթ . այս մտրձը սակայն ապարդիւն մնաց :

1856 ին Պարսկաստան պատերազմ հրատարակեց Հէրաթի դէմ , բայց անգլիական արշաւանքը դէպի Պարսից ծոցը հարկադրեց պարսկական զօրաց պահանջել եւ դաշնագրութիւն հաստատել Փարիզի վեհաժողովին մէջ : Պարսիկներն Հէրաթէն ելնելու ժամանակ , անդ Սուլթան նշանակեցին Ահմետ խանը , որ Պարսկականէն գէնք եւ թնդանթ կը ստանար , եւ այդպէս Պարսկաստան կը հասնէր իւր նպատակին , եթէ Հէրաթցիք Պարսից դերիշխանութիւնը չը խորտակէին : 1861 ին Հէրաթի եւ Աֆղանիստանի մէջ երկպառակութեան ինկաւ : 1862 ի Յունիսին , երբ Աֆղանիստանի նահանգապետն մտադիր էր գրաւել Հէրաթ , Հէրաթի Սուլթանը 8,000 զօրք ժողովելով յարձակեցաւ Աֆղանաց վրայ եւ Ֆերայի մօտ յաղթեց զայն : Այն ժամանակ Տոսթ-Մուհամէտ , Աֆղանիստանի էմիրը , իւր զօրքերը կեդրոնացուց Հերիքի մօտ , կիմուտի վրայ եւ յառաջ տարաւ դէպի Հէրաթ , զոր առնելով աւերեցին եւ կողոպտեցին : Սակայն երկար ժամանակ Աֆղանստանի էմիրը հովանաւորութեան ներքեւ չը մնաց : Էմիրի որդին , Մուհամէտ Եաղուպ խան , կարողացաւ տիրել Հէրաթի 1871 ին եւ անկախօրէն իշխել մինչեւ 1874 տարին : Իսկ վերջին տարիները , Էյուպ խան կը կառավարէր զՀէրաթ , բայց երբ Ապտ-իւլ-Բահման խան Քապուլի գահը նստաւ , պարտաւորեցաւ Պարսկաստան փախչիլ . այն ատեն աֆղան խանը ի Հէրաթ հաստատեց իւր նահանգապետը , որմէ դժգոհ են Հէրաթցիք , որովհետեւ չեն ուզեր ոչ Քապուլի , ոչ Պարսկաստանի եւ ոչ ալ Անգլիացոց հպատակութեան ենթակայ մնալ :

Այս խօսքերով կը վերջացնէ ուս թերթը եւ այս տեղ կը լռէ , բացայայտ կամենալով ցոյց տալ թէ Ռուսիոյ հպատակութիւնն համակրելի է միայն նոցա :

ՔԱՂՈՒԱԾ ՇԱՐԱԹԱԿԱՆ ԱՐՈՅ

30 ՄԱՐՏ-5 ԱՊՐԻԼ 1885

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Ռուսիոյ ծովային գործոց նախարար Ա. Բըսիս Մեծ Դուքսն հրաման դրկեց Սեւ Յոփու նաւահանգստաց ծովակալներուն՝ պատրաստել իրենց բոլոր նաւեր, ապրիլի վերջանալէն առաջ, գործոն ծառայութեան մէջ դրուելու համար:

— Զարին անձնապահ զօրաց հրամանատար Բաւլի Շուվալովի կոմսը Պէրլինի ուսական դեսպան անուանեցաւ հանգուցեալ Օրլովի իշխանին տեղ:

— Պիզմարը իշխանը մեծ հրճուանօք տիրացաւ Շէօնհաւզէնի հօրենական կալուածոց, զոր գերմանական ազգն հանոյին հանգանակութեամբ նուիրած է իրեն՝ ծըննդեան 70 ըդ տարեդարձին առթիւ: Ի Շէօնհաւզէն, որ երկաթուղիով երկու ժամ հեռի է Պէրլինէն, ոտք կոխելու առթիւ նախարարապետը շնորհակալեաց հեռագիր մ'ուղղեց առ համայն ազգն՝ որ իրացուցած էր իւր այս երկարամեայ բաղձանքն, այն է՝ վերստացումն հօրենական ազարակին և դժեակին:

— Ռուսական աղբիւրներէ Կ. Պոլիս եկած նորագոյն լրոց նայելով, շատ հաւանական է որ ի մօտոյ փոխուի Կաւկասիոյ իշխան Տօնտուքօֆ Քորսաքօֆ: Թէ ո՛վ կը լինի նորա յաջորդն, այս մասին ո՛ր եւ է տեղեկութիւն չկայ դեռ:

Ոյժ կը գտնէ նաեւ այն լուր թէ Կոմս Դոլսդոյ բոլորովին հրաժարած է ներքին գործոց նախարարութենէն: Նորա յաջորդն ի մօտոյ պիտի անուանի եղեր:

— Թէեւ Իսլանտացի ազգասիրաց ծայրայեղ մասը շատ աշխատեցաւ որ Իսլանտացի ժողովուրդը պաղ ընդունելութիւն մ'ընէ Կալլէսի իշխանին ու իշխանուհոյն, բայց անոնք ցնծագին ընդունելութիւն մը գտան Տըպլինի եւ Իսլանտայի այլ քաղաքաց մէջ ուր այցեցին: Այս ընդունելութիւն ընողներ Իսլանտայի միայն անգլիացի բնակիչը չէին, կաթոլիկ ազգասէրներ եւ ինքնավարականներ ալ լաւ ընդունելու-

թիւն մ'ըրին, թէ՛ առ ի քաղաքավարութիւն եւ թէ՛ այն պատճառաւ որ Անգլիոյ արքայական գերդաստանն ամեն կուսակցական վէճերէ վեր կը գտնուի: Իսլանտացի ինքնավարականաց ողջամիտ մասն եւս, թէեւ կը պահանջէ Իսլանտայի քաղաքային եւ վարչային ինքնօրինութիւն, չի մերժեր զՎիքթորիա թագուհին, որոյ հովանաւորութիւնը միշտ պիտի վայելէ իրենց տեսնել փափաքած Իսլանտան:

— Մատրիարի բոլոր ազատական եւ հանրապետական լրագիրք կը բողոքեն հանրային կրթութեան համար հաստատեալ նոր օրինաց դէմ: Հանրային կրթութեան կղերմիտ նախարար հանրածանօթ Պ. Բիտալ կուղէ տալ կղերին իշխանութիւն հիմնելու Համալսարաններ եւ դպրոցներ ուսուցչաց մարմնով մը, որք չունին բնաւ աւագեմական աստիճան: Կառաջարկէ նաեւ պարտաւորիչ ընել, դաստիարակութեան երեք աստիճանաց մէջ, կրօնի, բարոյագիտութեան եւ աստուածաբանութեան դասերն: Եպիսկոպոսունք, հանրային կրթութեան բարձրագոյն նորհրդին հետ միասին, իրաւունք պիտի ունենան հսկելու ուսմանց յայտադրոյն եւ դասընթացին վրայ: Կ'ըսուի թէ այդ նոր օրէնքին հիմունքն որդուած են ձեռամբ Պ. Բիտալի՝ խորհրդակցութեամբ Պապական նուիրակին, եւ թէ, շնորհիւ այս զիջմանց, Վատիկան պիտի հաւանի միջնորդել սպանիացի եպիսկոպոսաց մօտ, հրաւիրելու զայն: որ չափաւորեն իրենց ընդդիմութիւնն առ սպանիական կառավարութիւնն:

— Կ. Պոլսէն Վիէննայի լրագրաց ուղղեալ Հափասի հեռագիր մը կը ծանուցանէ թէ Վեհ. Սուլթանը ջերմ փափագ յայտնած է Պարսից Շահին որպէս զի Պարսկաստան եւ Թուրքիա համաձայնութեամբ ընթանան եթէ անկող-ուս պատերազմը ծագի:

— Թէհրանէն հեռագիր մը կը ծանուցանէ թէ մարտ 30 ին դաւադրութիւն մը երեւան ելած է Թէհրանի միջնաբերդը զրոնուող պետական բանտարկելոց մէջ որոց նպատակն էր փախչիլ: Քաղաքին էջ նմանապէս ձերբակալութիւնը եղած են եւ քաղաքական կարեւորութիւն կրնձայուի գործին:

— Բէդրասպուրկի պաշտօնական լրագիրը

կը ծանուցանէ թէ Բումարոֆ զօրավարը մարտ 18 ին զարկաւ Աֆղանները՝ Բուշ գետի երկու եզերաց երկայնութեամբ նոցա ամրացուցած դիրքերուն վրայ յարձակելով։ Աֆղանք, իրենց դրդուիչ եւ թշնամական շարժումներով, պատճառ տուած էին այս յարձակման։ Աֆղանք 8,000 հոգի էին եւ 8 թնդանօթ ունէին։ Բոլորովին յաղթուեցան, 500 մեռեալ ունեցան եւ նահանջեցին, Ռուսաց ձեռքը թողլով իրենց թնդանօթներ եւ բանակեալ։ Ռուսաց կորուստն է 14 մեռեալ եւ 32 վիրաւոր։ Յետ ճակատամարտին, Բումարոֆ զօրավարը Բուշ գետին ռուսական կողմէ վերադարձաւ եւ գլուխէ իւր առջի դիրքեր։ Անգլիացի ըստպէք ճակատամարտին ներկայ էին իբրեւ պարզ հանդիսատես։ Աֆղանաց փախստեան միջոցին Անգլիացի սպայք Ռուսաց պաշտպանութիւնը խնդրեցին, բայց Աֆղանք իրենց հետ մէկտեղ փախուցին անգլիացի սպայները։

Փուշ՝ Մուրղապ մեծ գետին մէկ առուն է, որ անոր մէջ կը թափի մերձ ի Բէնչտէն։

Տէյի Նիւզ կըսէ թէ Բեղրսպուրկէն եկած պաշտօնական հեռագիր մը նոր քայլ մ'առնուլ կուտայ ռուսոյ-աֆղան սահմանագլխի բանակցութեանց, զորս Բէնչտէնի դէպքն ընդհատած էր։ Այս հեռագիր, հաշտարար ձեւով խմբագրուած, համաձայնութեան աւելի ընդարձակ հիմ մը կը ներկայէ։

— Սպանիոյ վալէնսիա դաւառին մէջ շուերայի դէպքեր պատահեցան։

Ն Ե Ր Ք Ի Ն

Շուէտ Նորվեգիոյ Ոսկար թագաւորն՝ որոյ գալուստը ծանուցինք անցեալ շաբթու, երեքշաբթի օրը մեկնեցաւ մայրաքաղաքէս։ Ոսկար թագաւորը ցորչափ վեհ. Սուլթանին հիւր մնաց, արքայազնէն ընդունելութիւն գտաւ իւր ամուսնոյն՝ Սոֆի թագուհւոյն հետ։ Թագաւորն ու թագուհին քանիցս կայս. պալատը ճաշի հրաւիրուեցան, իսկ մնացեալ ժամանակներն անցուցին Պոլոյ պատմական վայրերը եւ զլիսաւոր չէնքերն այցելով։ Ոսկար թագաւորն այլ եւ այլ պատուանշաններ ընծայեց օսմանեան

նախարարաց եւ պալատականաց։ Ի մէջ այլոց, Բեհային Ասպլի մեծ ժապաւէնն ընծայեց վսեմ. Բոզագեան Յակոբ փաշա յին։ Ոսկար թագաւորին մեկնման օրը, վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ Տօլմա Պահ-ձէի պալատն իջնել, ողջերթ մաղթելու համար Իւր օգոստոսիաւ Հիւրին։ Ոսկար թագաւորը Պուքրէշ կերթայ, ուր քանի մ'օր հիւր մնալէ յետոյ, Պէրլին պիտի անցնի, Գերմանիոյ վեհ. կայսեր հետ տեսակցելու համար։

Իսկ Սոֆի թագուհին մայրաքաղաքս կը մնայ իւր հիւանդ որդւոյն՝ Շարլ իշխանին քով, որ ապաքինելու վրայ է։

— Նէոլոլոս արժանահաւատ աղբիւրէ կը տեղեկանայ թէ Արեւելեան Րումէլիի կուսակալ կապրիէ փաշա մօտերս մայրաքաղաքս պիտի գայ։

— Հակառակ տարածուած զրոյցներուն, Հասան Ֆէհմի փաշա չուտով չպիտի վերագառնայ ի կ. Պոլիս։ Վեհ. Սուլթանի պատուիրակն հրահանդ ստացեր է ժամանակ մը եւս մնալ ի Լոնտրո եւ կը կարծուի թէ Ն. վսեմութեան յանձնուած պաշտօնի մասին համաձայնութիւն մը գոյանայ ի մօտոյ Բ. Դրան եւ անգլիական կառավարութեան միջեւ։

— Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ հարաւուր ոսկոյ դումար մը նուիրել Տորքաս ընկերութեան, որոյ նպատակն է՝ առանց աղբի եւ կրօնի խտրութեան՝ աղքատաց օնել։

— Քանիցս յիշած ենք արդէն թէ Բ. Դուման Արեւելեան Րումէլիի կուսակալէն բացատրութիւն խնդրած է այն օրինական ծրագրոց վրայ որք վերջերս ըուէարկեցան գաւառին Երեսփոխանական ժողովէն։ Ասոնց մէջ կան գլխաւորաբար Պուրկազէն ի Փիլիպէ կառուցանելի երկաթուղւոյ մը ծրագիրն, եւ 1877-78ի պուլղարական ապստամբութեան մասնակցող կամաւորաց յատկանալի հանգստեան թոշակի օրէնքն։ Կայս. կառավարութիւնը չփաւերացուց այս երկու օրինական ծրագրերն՝ որք հետեւաբար իբր չեղեալ պէտք է նկատուին։

— Եգիպտական կառավարութիւնն ապրիլ 8ին դադրեցուցեր է Պոֆու Էնէլլու լըրադիրն։ Ոստիկանութիւնը տպագրութիւն դուռը խորտակելով ներս մտեր է։ Ֆրանսական հիւպատոսարանը բողոքեր է ուստիկանութեան այս ընթացքին դէմ։

— Պիղմարը իշխանին ծննդեան 70 րդ տարեդարձին առթիւ, մայրաքաղաքիս գերմանական հպատակաց կողմէ՝ զրկուած ուղերձն եւ ծանրագին նուէրն ասլրիւ Ձին մատուցուեր են Ն. Բարձրութեան :

Իշխանը նախ եւ առաջ հիացմամբ դիտեր է Ուղերձին գեղանկար շրջանակն : Եւ զայն կարգալէ յետոյ , թուրը քաշեր է պատուէն եւ ներկայ դեսպանաց ցոյց տալով ըսեր է . «Ո՛չ միայն արհեստական տեսակէտով սլատուական գէնք մ'է այս , այլ եւ պատմական մեծ արժէք ունեցող նիւթ մը , ըստ որում հռչակաւոր Թէրէտէլէնի Ալի փաշայի գործածածն է :» Ապա , նշմարելով որ թուրին բերանն արաբերէն արձանագրութիւն մը կ'այ , Պէրլինի Համալսարանի արեւելեան լեզուի ուսուցիչներէն մէկէն՝ որ անդ կը գտնուէր՝ խնդրեր է որ թարգմանէ զայն , եւ ուսուցիչը բարձրաձայն կարդացեր է արձանագրութիւնը «Այն որ այս զէնքով սպաննուի , տեսակ մը հաճոյք պիտի զգայ մահուան մէջ , ըստ որում այս տեսակ պատուական սրէ մ'ընդունած է զայն :»

Պիղմարը իշխանն յոյժ դո՛ւ մնացեր է Կ. Պոլսոյ Գերմանացւոց այս հոգածութենէն եւ մեծ բերկրութեամբ ու սքանչանօք ընդուներ են նուէրն :

— Կրէտէի վերջին թերթերը կը ծանուցանեն թէ կղզւոյն յոյն բնակիչք այս օրերս դարձեալ հանրագիր մատուցեր են իրենց կուսակալին եւ հեռագիր ուղղեր են առ Բարձր. Մեծ Խալաթթան , որով նշուլար Մէտրապոլտաց Պէրլէ շտանձնուիւր կը խընդրեն , յայտարարելով որ Պէրլէներու յանձնումը կը Կրէտէի մէջ ծանր խռովութեանց ծագման պատճառ պիտի լինի :

— Հանեայի (Կրէտէ) կայսերական անձնապահ հեծելազօրաց Միրիփա Էտհէմ փաշայի ուղղեալ հեռագիր մը կը ծանուցանէ թէ Նորին Վսեմութեան եղբայրը Մուսթաֆա պէյ անցեալ շաբթու սպաննուեր է տեղւոյն բրիտանէից կողմէն : Վսեմ. Էտհէմ ֆաշայի քեռայրն եւս ասիէ թ ամիս առաջ սպաննուած էր : Չարագործք ձերբակալուեր են :

— Կարինէն առնուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ ասլրիւ ԱՅի գիշերը , չորս հոգի տեղւոյն անգլիական հիւ-

պատոս Պ Էվրէթի տունը մտեր են գողութեան նպատակաւ : Հիւպատոսը դիմադրեր է անոնց եւ կռւոյ միջոցին չորս տեղէ վիրաւորուեր է ու անգլիէն մէկը կտորեր է : Ոստիկանութիւնն իրողութիւնն իմանալով անմիջապէս չարագործներն հալածելու ելեր եւ յաջորդ օրն իսկ յաջողեր է գտնել հինգն ալ : Ձերբակալեալք քաղաքին կեդրոնական բանտը դրուած են եւ հարցաքննութեան պիտի ենթարկին :

Հիւպատոսական փոխանորդ Պ. Տըվէյ որ Վան կ'ուղեւորէր, Էվրէթ գընդապետէն հրաման ստացեր է Կարին վերադառնալ : Պ. Էվրէթ երկրորդ հեռագիր մ'ուղղելով մայրաքաղաքս , կը յայտնէ թէ ստացած վերքերն այնքան ծանր չեն եւ թէ վտանգն անցուցած է

— Հալէփ Սեւանիկէն ստացած մասնաւոր տեղեկութեանց համեմատ , ցաւալի դէպք մը կը պատմէ որ Նէվրոբոքի մէջ պատահեր է :

Տասն օրի չափ յառաջ , Մարթինի հրացաններով վրնեալ չորս ալպանիացիք՝ Արեւ. Բումէլիէն Սեւանիկ անցնիլ ուղեւով , սահմանադիւսոյն վրայ բռնուեր են , վասն զի զէնքի համար անցագիր չունէին : Տեղւոյն ոստիկանապետն առաջարկեց ալպանիացւոց որպէս զի Նէվրոբոք երթան եւ հարկ եղած բացատրութիւնը կառավարչին տան : Ստնք հաւանեցան եւ հեռագրական սլաշտնաւունը գնացին ուր կը գտնուէր կառավարիչն , հաղարապետ Նէճրիպ Էֆէնտիի հետ : Անդ , հարցաքննութենէ մը յետոյ որոշեցաւ որ ալպանիացիք երաշխաւորութիւն մը տալով շարունակեն իրենց ճանքան : Կերեւի թէ այս որոշում անիրաւ երեւցաւ ալպանիացւոց՝ որք հրացանին հանելով կրակ ըրին : Հաղարապետն , հեռագրատան պաշտօնեայն , երկու ուրիշ ներկայ անձինք եւ ոստիկան մ'սպաննուեցան : Իսկ քանի մը ուրիշ անձինք ալ վիրաւորեցան : Չարագործք փորձեցին փախչիլ , սակայն ոստիկանք հալածելով զանոնք , երկուքն սպաննեցին եւ միւս երկուքը ձերբակալել յաջողեցան :

Ա Ձ Դ Ա Յ Ի Ն

Երուսաղեմէն կը գրեն թէ մարտ 20 ին անդ հասեր են Վսեմ. Քեամիլ փաշայի եւ պատրիարքական տեղապահ Գեր. Ռուսնուգլեան Հօր հեռագիրք որք Ամեն. Վեհապետեան Սրբազանի ընտրութիւնն հաստատող Կայսերական Իրատէին եւնելը կը ծանուցանէին :

Հետեւեալ առաւօտուն, Աւագ Հինգշաբթի, Ն. Սրբազնութիւն եկեղեցի տարուեր է հանդիսաւոր Հրաշափառով եւ ձախակողմեան դասն յատկապէս պատրաստեալ աթոռին վրայ բազմեր է : Նոյն օրը պատարագեր է Գեր. Իվմիրեան եպիսկոպոս, որ Ամեն. Եսայի Պատրիարքի հրամանաւ, յիշատակեր է նորընտիր Ս. Պատրիարքի առունը :

— Յաւօք կը տեղեկանանք թէ Ամեն. Եսայի Սրբազան Պատրիարքն երկու շաբաթէ հետէ անկողնոյ կը ծառայէ յԵրուսաղեմ, իւր ծանօթ տկարութեան պատճառաւ :

— Փանի մը մասնաւոր անձանց ստորագրութեամբ Մուշէն ի Պատրիարքարան հասած հեռագիր մը Ս. Կարապետի վանուց Միաբանութեան երկպառակտեալ եւ անիշխանական վիճակը նկարագրելով, կը խնդրէ որ Սրբանձնտեանց Գեր. Գարեգին վարդապետ վանահայր ընտրուի նոյն վանուց եւ շուտով զրկուի :

— Ազգ. Երեսփոխանական Ժողովն իւր փակման նիստը պիտի ընէ՝ Ամեն. Ս. Պատրիարք Հօր ի Մայր Եկեղեցւոյ հանդիսաւոր ուխտի կատարման օրն :

— Տիգրանակերտէն ի Պատրիարքարան հասած հեռագիր մը նկարագրելով տեղւոյն Ազգայի գործոց անխնամ վիճակը, կը խնդրէ որ Առաջն. Տեղապահ մը զրկուի հոն եւ կամ առաջնորդական ընտրելեաց ցանկ մը :

Պատր. Գեր. Տեղապահ հայրը սոյն հեռագիրն եւ ուրիշ այս յիսի հեռագրեր եւ պաշտօնագրեր Կրօն Ժողովոյ յառաջիկայ նստին պիտի ներկայացնէ, որպէս զի նկատողութեան առնուելով՝ պատրաստուի առաջնորդական ընտրելեաց ցուցակն, որ քանի մը ամսէ ի վեր խնդրոյ նիւթ եղած է, բայց տակաւին չէ պատրաստուած :

— Եղիպտոսէն կը ծանուցանեն մեզ թէ խոյնի Սրբապետ Մեծ. Տիգրան էֆէնտի Միրտիչեան, որ վեց ամիս առաջ Հապէշաստանի Յովհաննէս Թագաւորին համար ծանրագին եւ մարգարտաղարդ վերարկու մը պատրաստելով, անձամբ տարած էր զայն Նորին վեհափառութեան մատուցանելու, այս օրերս Եթովպիոյէն վերադարձեր է յԵղիպտոս : Նորին վեհափառութիւնը խիստ դժեղեր է Հայագգի արուեստագիտին ձեռակերտէն, եւ մեծամեծ պատիւներով ցոյց տուեր է իւր գոհունակութիւնն, ինչպէս նաեւ նորանոր յանձնարարութիւններ ալ ըրեր է, միանգամայն յայտնելով թէ այն ամեն Հայերն որք բազմիցս Եթովպիա դնացած են վաճառականութեամբ, յանապիս գոհ ըրած են զինքը, եւ թէ ինք միշտ կը փափաքի Հայոց հետ դործ ընել եւ զանոնք քաջալերել իւր երկրին մէջ :

— Վերջին թղթաբերով առնուած Թայֆլէներու մէջ արձագանգ գտած է Կաւկասիոյ Հայոց վարժարանաց փակման խնդիրը :

Պ. Կ. Յակոբեան «Հայկական Գործեր» վերնագրով ընդարձակ նամակ մը կը հրատարակէ Թայֆլի ապրիլ 9 թուով, յորում կը խօսի Կաւկասիոյ Հայոց դպրոցներուն փակման վրայ, նոյն իմաստով որով այս խնդիր քննուած եւ պաշտպանուած է Արեւելի մէջ : Պ. Յակոբեան Կաթողիկոսական եւ Պատրիարքական ընտրութեանց վրայ եւս կը խօսի :

Թայֆլի աշխարհածանօթ Թիլթակիդը, «Թիլթակիցներու Թագաւորը», Պ. տը Պլոմիճ իւր ապրիլ 8 թուով հեռագրական նամակին մէջ կը յիշատակէ զայս խնդիր, խօսելով Ռուսիոյ մէջ հարստահարեալ ազգութեանց եւ անոնց բաղձանքներուն եւ յոյսերուն վրայ, վերաբերմամբ անգլոյ-ռուս պատերազմին : Պ. տը Պլոմիճ «Կաւկասիոյ ինքնօրինութեան» դատին համակրիլ կը թուի :

— Վանէն մարտ 19/31 թուով հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդեն առ «Էքսպրէս» :

«Խրիմեան Սրբազան երէկ մեկնեցաւ քաղաքէս : Անցեալ կիրակի Ն. Սրբազնութիւնն հրաժեշտի քարոյ մը խօսեցաւ եկեղեցւոյն մէջ, ի ներկայութեան խուռն բազմութեան : Ըսաւ թէ իւր բոլոր կեանքը նուիրած է ազգին բարօրութեան և երկրին շահուց, և

թէպէտ ծերացած և անձամբ տկար՝ այլ պիտի չարունակէ իւր կրօնական պարտաւ կանութիւնները կատարել ժողովրդեան և, երկրին կացութեան բարեկեցական համար: Ն. Սրբազնութիւնն յորդոր կարգաց ժողովրդեան՝ վստահութեամբ նկատել ապագայն որ բարեբաստութիւն և խաղաղութիւն պիտի պարգեւէ համայն աշխարհի, և վերջացուց ըսելով «կատարենք մեր պարտքն և մեր յոյսը դնենք Ամենուկային վրայ»: Ներկայ ժողովուրդն յարտասուս շարժեալ բոլորեցան Հայրիկի շուրջը և վերջին անգամ նորա անհրաժեշտութեան օրհնութիւնն ստացան: Միջօրէին, Խրիմեան Սրբազան հրաժեշտի այցելութիւններ տուաւ պարսկական և ռուսական հիւպատոսաց ինչպէս քաղաքին երեւելեաց:

Մարտ 1830ին, Ն. Սրբազնութիւնը ճանաչեց ելաւ Կ. Պոլիս դալու համար, հրաժեշտ առնելով Վանայ գիւնուորական հրամանատար Միւնիքի վաչայէն և կուսակալ Համիտ վաչայէն: Քաղաքին բոլոր հայոց կրպակները գոց էին այն օրը, և անհամար բազմութիւն խոնուած էր մինչեւ թէպարիչ Քաբուսու, այն ճանաչաներուն վրայ ուստից պիտի անցնէր Հայրիկն: Գաւառական և կրօնական ժողովոց անդամք, երեւելիք, քահանայք, ուսուցիչք համախմբուած էին առաջնորդարանի մեծ սրահին մէջ: Ժամն ջին եկաւ ռուսական հիւպատոս Պ. Կոլոպէզին իւր թարգմանին հետ, ապա պարսկական հիւպատոս Սիրգա Մուսա խան, և քիչ վերջը Խրիմեան Սրբազան, ընկերակցութեամբ Պոլոս եպիսկոպոսի: Բազմութիւնն այնքան շատ էր որ վախճուելով որ արկած մը չսպասահի, դաւառական ժողովոյ առենպետն և ուրիշ քանի մ'անձինք փութացին իրենց ողջերթի ճառերն արտասանել: Խրիմեան Սրբազան, ի պատասխանի, շնորհակալութիւն յայտնեց, օրհնեց ժողովուրդն և ապա եկեղեցի իջաւ: Եկեղեցիէն ելնելով, երբ Ն. Սրբազնութիւնը ձի հեհեծած սկսաւ հեռանալ, խուռն բազմութիւն շրջապատած էին զինքն և կը դռնէին «կեցցէ Հայրիկ, կեցցէ մեր Կաթողիկոսն»: Այսպէս ժողովուրդը մինչեւ Վանայ լճին վրայ գտնուող գիւղն հետեւեցաւ Խրիմեան Սրբազանին: Որքան ալ որ դեռ օդերը դժնդակ են և Խրիմեան Սրբազան տարեց

է, սակայն քանիցս յայտարարեց թէ ինք յանձն առած է այս ուղեորութիւն, ցոյց տալու համար իւր հաւատարմութիւնն և անձնուորութիւնն առ Կոյս, կառավարութիւնն «զի պատրաստ եմ, ըսաւ, զոհել անձս երբ հրամայէ մեր Վեհապետն»:

— Տիգրանակերտի Անձնուէր ընկերութեան կողմէ ի Պատրիարքարան հասած հեռագիր մը կը խնդրէ որ Տիգրանեան «հրաչափած» Մկրտիչ եպիսկոպոս հեռացուի անմիջապէս: Հեռագիրը կը յարէ թէ դաւառին աղգային ժողովները կազմալուծեալ վիճակի մէջ լինելով, ամեն դուրս երեսի վրայ մնացած է և անիշխանութիւնը կատարելապէս կը տիրէ:

— Դարձեալ Տիգրանակերտէն առաջնորդական փոխանորդ Տ. Յովհաննէս քահանայի ստորագրութեամբ հեռագիր մը կը հերքէ Անձնուէր ընկերութեան կնիքն Մկրտիչ եպիսկոպոսի և աղգային ժողովոյ դադարման նկատմամբ տրուած տեղեկութիւնները: Սակայն կը խոստովանի թէ Առաջնորդի մը ներկայութիւնն անհրաժեշտ է:

— Պաղտատէն հասած հանրագիր մը Նաճառեան Փիլիպպոս եպիսկոպոսի մեկնիլը ծանուցանելով, աղգային Պատրիարքարանին կը հաղորդէ պատճէնն այն ամբաստանագրոյն որ Բ. Դուռը զրկուած է: Այդ գրոյն մէջ Փիլիպպոս եպիսկոպոսի վերագրեալ 17ի չափ ամբաստանութիւնք յիշուած են:

Պատրիարքական Դեր. Տեղապահ Հայրն որոշեց որ այս խնդրոյն նկատառումը վերապահուի ցգալուստ Փիլիպպոս եպիսկոպոսի ի Կ. Պոլիս:

26 Կ/1833. — Յալօ, Վան. 2եր մարտ 10 նամակն ստացանք. զրկեցէ՞ք ժողովրդական վէպն. կը կարդանք եւ կը պատասխանենք:

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԿԻՍՈՎԻՆ ՀԱՍՏԱՏ ԵՒ ՇԱՐԺԱԿԱՆ ՇՈԳԵՇԱՐԺ ՄԵՔԵՆԱՅԻՑ

145 50 ՁՈՐԻ ԶՕՐՈՒԹԵԱՄԲ ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԵՒ ՈՒՂՂԱԶԻԳ ՄԵՔԵՆԱՅԻՑՆԵՐ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՅ

ՇԱՐԺԱԿԱՆ

345 50 ձիու զօրութեամբ




ՈՒՂՂԱԶԻԳ ՄԵՔԵՆԱՅ

145 20 ձիու զօրութեամբ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՅ

ԿԷՍ ՀԱՍՏԱՏՈՒՆ

545 50 ձիու զօրութեամբ



Այս բոլոր մեքենայք կազմ և պատրաստ կը գտնուին :

Ժ. ՀԵՐՄԱՆ-Լ. Ա. ՇԱՔԷԼ

Ժ. ՊՈՒԼԷ ԸՆԷ. Յաջորդք, Երկրաչափք, — Յօրինիչք.

Փողոց ՊՈՒԱՆՈ, 31—33 (Պուլար Թրնանո, 4—6) ՓԱՐԻԶ

— Մանրամասն յայտագիր կը դրկուի ձրիաբար —

Խ Ա Ր Ի Ս Խ

ԿԵՆԱՅ, ԵԿԱՄՏԻՑ ԵՒ ՕԺՏԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԻՎԵՐՍԻՏԵ

Գործողութիւնք 1884 Դեկտեմբեր ամսուն

Այս ամսուն մէջ ստացուած և ստորագրուած են 879 նոր մուրհակներ (բոլիս) որք կը կազմեն 5.120.387.50 Փրանք սպահովագրեալ դրամագլուխ .

Բաժիններու գանձումն

806.315

»

Վճարումն մահուանց առթիւ

110.807

»

Ամփոփումն 1884 տարւոյ գործողութեանց

Ընկերութիւնն ստորագրած է 7.940 մուրհակներ որք ի միասին կը կազմեն 43.545.782.50 Փրանք սպահովագրեալ դրամագլուխ .

Բաժնոց գանձումնք 8.755.257.50 Փրանքի բարձրացած են

Վճարումնք մահուան առթիւ 1.667.077.50 Փրանք :

Իւր հիմնարկութենէն ի վեր, ընկերութիւնը վճարած է

Մահուանց առթիւ

32.237.662.50 Փր.

Համագումար

Օժամանց առթիւ (1871-1884) 67.511.262.50

»

99.808.925 Փրանք

Թոշակի համար ընդհանուր ներկայացուցիչ

ՄՈՐԻՍ ՊԷՐԲՁԻ

Գրասենեակք Ղալաթիա, Վոյվօտա փողոց, Թիւ 26 գերմանական Թղթաաան վրայ :



ՀՐԴԵՆԻ ԴԵՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ



NORTH BRITISH AND MERCANTILE Insurance company ՆՈՐԹՅ ՊՐԻԹԻՇ ԷՆՊ ՄԵՐԿԵՆԹԻՍԵԼ

Հանրային և Էպիսկոպալիտական ապահովումներ	
Ընկերություն	Անգլի Լիբ.
Արտոնեալ դրամագլուխ	3,000,000
Բաժանորդագրեալ դրամագլուխ	2,500,000
Վճարեալ	625,000
Պահեստի դրամ հրդեհի պատահականութեանց դէմ	1,592,235
Կենսական պատահականութեանց դէմ պահեստի դրամ	3,841,194
	6,058,429
Հրդեհի ծիւղէն հասոյթ 1883 տարւոյ	4,186,865
Կենսական ծիւղէն հասոյթ 1883 տարւոյ	551,307
	4,738,172

NORTHERN Assurance company ՆՕՐԹ ՀԸՐՆ

Հանրային և Էպիսկոպալիտական ապահովումներ	
Ընկերություն	Անգլի Լիբ.
Բաժանորդագրեալ դրամագլուխ	3,000,000
Վճարեալ	300,000
Պահեստի դրամ հրդեհի պատահականութեանց դէմ	811,871
Կենսական պատահականութեանց դէմ պահեստի դրամ	1,778,300
	2,890,171
Հրդեհի ծիւղէն հասոյթ 1883 տարւոյ	520,206
Կենսական ծիւղէն հասոյթ 1883 տարւոյ	251,572
	771,778

Ստորագրեալն իւր բազմաթիւ յաճախորդաց և քաղաքիս ընդհանուր յարգոյ հասարակութեան կը ծանուցանէ թէ ինչն վերոյիշեալ երկու ընկերութեանց միացեալ դորժակատար ընտրուած ըլլալով, այնպիսի դրութեան մը մէջ կը գտնուի, որով հրդեհի դէմ ապահովութեան մեծ դիւրութիւններ կը մատուցանէ։ Ապահովութեանց կարգադրութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց մէջ համեմատական բաժանումէ մը, և այսպէս ապահովութեան և դիւրութեան աւելնալովն ընկերութիւնս ալ կրնայ աւելի մեծապէս մար ապահովութիւն բռնողներու ինքզինք ներկայացնել։

Գրեթէ ամեն կարգի վտանգաւոր ապահովութիւնք կրնան ընդունիլ, ինչպէս Բերայի, Ղալաթիոյ և Պոլսոյ մէջ, նոյնպէս մօտակայ քաղաքները, գիւղերն և գաւառները։

MARITIME Insurance Cie limited of Liverpool Capital Lt. 500,000

ՄԱՐԻԹԱՅՄ Ծովային ապահովումներ ընկերություն Դրամագլուխ 500,000 Անգլի Լիբ.

Սա ապրեալը, շոգենաւներու և առաջատանաւերու մէջի վաճառքներն ու կարասիները խիստ օգտակար պայմաններով ապահովելու իշխանութիւն ստացած է ընկերութեան կողմէ։

Գիններուն և այլոց վրայ տեղեկութիւն ստանալ ուղղորդ պէտք է դիմեն Կալաթիա, Բոմբէյի խանի անկիւնը՝ երկաթէ կամուրջին վրայ նայող սենեակին, առ

Կ. Պոլսոյ Լիբ. Գործակապար յիշեալ Ընկերութեանց

ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈՒՍԵԱՆ

Սրտունաւոր Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻՔ ԼՐԱԳՐՈՅ